

3929

ՀԱՍԿԵՐԻ ՄԱՆՈՒԿԱՐԺԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

XXII.

Ն. ԿԱՐՅՈՎ

ԵՐԵԽԱՆԵՐԻ

ԿԱՊՐԻԶՆԵՐՆ ԵՒ ԴԻԽԱԳՐԳՈՈՒԹԻՒՆԸ

Թուսերէնից Խարգծանեց

Մ. Սահակյան

151.7

10 36

Թ Ի Ց Լ Ի Ս

ԵՐԵՎԱՆԻ ՊՐԻՎԱՏ ԱՐՏԱՎԵՐԱԿԱՆ ՊՈՂԻՑ. 7.
1910

-36

14 JUL 2009

«ՀԱՅԿԵՐԻ» ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

XXII

370

2049-44

Ե. Կ Ա Ր Ց

ԵՐԵՒԱՆԵՐԻ

ԿԱՊՐԻԶՆԵՐՆ ԵՒ ԴԻԽՐԱԳՐԳՈՅՆԹԻՒՆԵ

Առասելէնից Թարգմանեց
Ս. Սահակեան



Թ Ի Ց Լ Ի Ա
ԵԼԵՔՏՐԱԿԱՐԺ ՏՊ. ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՏԻՒ, ՊՈԼԻՏ. Դ.
1910

Երեխաների կապրիզներն եւ դիւրագրգռութիւնը

I

Թէպէտ «կապրիզ» հասկացողութիւնը յաճախ է պատահում ինչպէս կեանքում, նոյնպէս էլ մանկավարժական գրւածքներում, սակայն կըթութեան տեսութեան մէջ չենք գտնում բացատրութիւն՝ թէ ինչ է այդ հասկացողութիւնը։ Իիտքէի մեծ բառարանը, ինչպէս նաև ուռւսաց Ակադեմիականը և ուրիշները կամ բոլորովին չեն բացատրում այդ հասկացողութիւնը, կամ՝ որպէս մանկավարժական հարցերին չը նւիրւած բառարաններ, այնպիսի բացատրութիւններ են տալիս, որ երեխաների կեանքին չեն վերաբերում, կամ թէ չէ, վերջապէս, փոխարինում են հոմանիշ բառերով, ինչպէս օրինակ՝ ինքնահաճութիւն, իրասածութիւն, յամառութիւն, անկոտրումութիւն, կամակորութիւն և այն, որոնցից իւրաքանչիւրը իր հերթին ունի իր առանձին միտքը։ Այդ բառը չը կայ նաև գերմանական լեզվի մէջ, որ յատկապէս մանկավարժութեան լեզուն է։ Գերմանական ընդհանուր և զուտ մանկավարժական բառարանները յաճախ բոլորովին չեն յիշատակում այդ արմատը, այլ փոխարինում են այս բառերով—der Eigensinn, der Eigenwille, die Grillin, die Launen։ Բայց դրանք յամենայն գէպս «կապրիզ» չեն, որ հաստատում է արդէն հետևեալ մի փաստով։ Գերմանական մանկավարժ

Strümpel-ը իր «Die Pädagogische Pathologie» աշխատութեան մէջ մատնանշում է մօտ 300 մանկական պակասութիւնների վրա և «Capriciös» յատկութիւնը յիշատակելով ասում է՝ տես «Eigensinn» բառը, իսկ «Eigensinn» բառի դիմաց ասում է, որ այս վերջին յատկութիւնը երբեմն հանդիսանում է որպէս «կապրիզ»։ Մի ուրիշ տեղ նոյն հեղինակը հաստատում է, որ երբեմն Լանuenhaftigkeit դառնում է Eigensinn։ Հետեւաբար այդ հեղինակի հասկացողութեամբ յիշեալ գաղափարները տարբեր են։

♦ Ծնողների խօսակցութիւնները նոյնպէս համոզում են մեզ որ այդ հասկացողութիւնը անորոշ է։ Իսկ որ ասենք, երեխան հիւր է գնացել և խաղով է տարսել, իսկ վազուց ժամանակ է քնի, նրան տուն են տանում։ Նա լաց է լինում։ Ոմանք այս բանում տեսնում են կապրիզ, ուրիշները բացասում են այստեղ որևէ կապրիզ, լնդունելով այդ որպէս բնական դիւրագրգութիւն միայն։

Կապրիզ գաղափարի անորոշ լինելը հասկացողութիւնների մէջ շիռթ է առաջացնում, և այդ պէտք է վատ հետեւանք ունենայ երեխաների կըրթութեան համար։ Այդ չարիքից խուսափելու համար, պէտք է ճիշտ սահմանել այդ գաղափարը. զրահամար անհրաժեշտ է բազմակողմանի քննութեան ենթարկել այն երևոյթները, որոնք սովորաբար կապրիզ են կրչում, և այդպիսով ցոյց տալ այդ գաղափարի հական յատկութիւնները։

«Կապրիզ» բառի արմատը, ինչպէս ասում է Լիտ-

րէն, նոյնպէս և ուսւ լեզւարան Բէլսկին և Լուչինսկին, վեցըրւած է լատինական սար կամ capra բառից, որ նշանակում է այծ *): Այդ կենդանու բնաւորութիւնը, ի հարկէ, որոշ չափով բացատրում է յիշեալ բառի ծագումը։ Բրէմը, հիմնւելով հեղինակաւոր աշխատութիւնների մէջ բերեած մի շարք հետաքրքիր փաստերի վրա այսպէս է բնորոշում այդ կենդանուն, թէ զգալունութիւնը կամ կալտառութիւնը, թեթևամտութիւնը, քմահածութիւնը, կուսիրութիւնը եւլամառութիւնը կազմում են նրա բնաւորութեան աշքի ընկնող գծերը։ Այդ թէ թե թեամտութիւնը, կամ աւելի ճիշտն ասած՝ լուրջ մտածողութեան բացակայութիւնը; այդ կուսիրութիւնը կամ գոնէ հակամառելու հակումը, այդ յամառութիւնը, թէ կուռ փոքր չափով, այդ ամենը անհրաժեշտ են կապրիզու անձի համար։ Իսկ զգայունութիւնն ու կայտառութիւնը երբեք չեն հակասում։ կապրիզութեանը, այլ ընդհակառակն, ինչպէս կը տեսնենք յետոյ, յաճախ նհարդային մարդկանց մէջ նրանք կցորդում են իրար։ Միւս կողմից՝ այդ բառի ծագումը կարելի է բացարել (ինչպէս և անում է Լիտրէն) այն անսպասելիութեամբ, որ միշտ յատուկ է ինչպէս մարդկանց կապրիզներին, նոյնպէս և այծի ցատկութեներին։ Այսպիսով ուրեմն այս բառի միայն լեզւաբանական հետազոտութիւնը որոշ լոյս է սփռում վերլուծելիք երևոյթի բնորոշ գծերի վրա։

*) Համեմատիր՝ հայերէն «իծաները հաւաքւել են» դասձւածքի հետ։ Ծ. թ.

«Կապրիզներ» հասկացողութիւնը վերլուծելիս չը պէտք է անտես առնել նրանց արտայայտող դիմագծերը, որոնք այս կամ այն մկանի զարգացման շնորհիւ ցոյց են տալիս թէ որ դրդումներն են մարդու բնաւորութեան մէջ գերակշողող։ Ես շատերին եմ հարցրել, դիտմամբ ցոյց եմ տեև կապրիզոտ մարդկանց լուսանկարները, և եկել եմ այն եղրակացութեան, որ (շատերի կարծիքով) կապրիզոտ դէմքի բնորոշ գծերն են՝ 1) յօնքերի միջի ուղղաճայեաց կնձիոը (եթէ դա դեռ երիտասարդ է), 2) յօնքերի ներքին ծայրերի վերքաշւած լինելը, 3) առաջ եկած ստորին շրթունքն և, վերջապէս, 4) բերանի ցած իջած անկիւնները։ Թէ դիտական աշխատութիւնների մէջ (Բէն, Պրէյեր) և թէ առօրեայ կեանքում յօնքերի միջի ուղղաճայեաց կնձիոը ճանաչւում է իբրև նշան անբաւականութեան, միայն տարիքաւոր մարդկանց մօսա—դա մտքի կենտրոնացման նշան է։ Վեր ցցւած յօնքերը, Լաֆատէրի և Մանտեգացցայի խօսքով (որոնք գիտական մեծ հեղինակութիւն ունեն), ցոյց են տալիս մարդու թեթեամտութիւնը։ Այդպիսով ուրեմն վեր քաշւած յօնքերը և նրանց միջի ուղղաճայեաց կնձիոը նշան են մարդու ոչ լուրջ և դժգո՞ն լինելուն։ Առաջ եկած ստորին շրթունքից Լաֆատէրը և, գլխաւորապէս, Դարւինը դիւրագրութիւն են հետևեցնում, իսկ Մանտեգացցան—յամառութեան կամ կամքի ուժի վկայութիւն։ Բայց վերջինս յօնքերի ցոյց տևած թեթեամտութեան հետ չե կարող զուգորդել։ Ինչ վերաբերում է բերանի անկիւնների թեթե իջած լինելուն, Դարւինի և Պրէյերի

կարծիքով դա նոյնպէս ցոյց է տալիս անբաւականութիւն կամ թախիծ։ Ասենք՝ Փիզիօնոմիկան (դիմանաչութիւնը) գեռ ևս չի կարող լուրջ հեղինակութիւն համարւել, այնուամենայնիւ նրա ցուցումները հոգեկան կեանքի և մկանների շարժումների կապի նկատմամբ հիմնած են ճիշտ գիտական փաստերի վըրա։ Իսկ մկանների գործունէութիւնից կախւած է նրանց զարգացումը, ինչպէս նաև վերոյիշեալ դիմագըծերը։ Այդպիսով ուրեմն գուրս է գալիս, որ այն մարդկանց, որոնց դէմքի արտայայտութիւնը ընդհանուրի կարծիքով կապրիզոտ է, յատուկ են մասամբ թեթեամտութիւնը, անբաւականութիւնը կամ դիւրագրգութիւնը, որոնք միշտ պատճառ են լինում վէճերին, և վերջապէս յամառութիւնը։ Հետևաբար, միմիկայի ուսումնասիրութեան վրա հիմնած եղրակացութիւնները նոյն արդիւնքն են տալիս, ինչ որ լեզւաբանութեան ուսումնասիրութիւնը։

Եթէ խորը մտածելու լինենք վերլուծելիք երկոյթների իսկական էութեան մասին, անկարելի է չը նկատել, որ երբէք կապրիզ չենք կոչում այն վարմունքները, որոնք առաջ են բերում լուրջ հետևանքներ, թէկուզ այդ վարմունքները լինեին միանգամայն անարդար, դիւրագրգութիւնից առաջացած և բացարձակ անհիմն երևային շրջապատճների աչքում։ Այսպիսի բնաւորութիւնների մասին, ինչպիսին են Յովհան Ահարկոնն, Նիրոնը և ալին, չին ասում, որ կապրիզում են միմիայն աւելի չնչին փաստերի շրջանում։

Բացի այդ, սովորաբար կապրիզ կոչւող երևոյթների մէջ միշտ նկատում է անբաւականութեան արագ անցնելը մի առարկայից միւսի վրա: Միւսոյն կապրիզը երկար չի տեսում, և այդ պատճառով շատ դէպքերում այդ երեսյի մասին խօսում են յոդնակի և ոչ թէ եգակի թւով. մասուկը այսօր «կապրիզներ» է անում և ոչ թէ «կապրիզ»: Անբաւականութեան՝ մի առարկայից միւսի վրա արագ անցնելով է, որ կապրիզը զանազանում է յամառութիւնից: Դրա համար է այնքան դժւար բաւարարութիւն տալ կապրիզու երեխային կամ մարդուն: Գոհ լինել և միւսոյն ժամանակ կապրիզներ անել միանդամայն անկարելի է, ուստի և մի առիթից միւսին արագ անցնող դժգոհութիւնը կամ այդ ձեփի գիւրադրութիւնը կազմում է կապրիզների գլխաւոր և աչքի ընկնող յատկանիշը:

Այս ամենը ուշադրութեան առնելով մենք կարող ենք այսպէս սահմանել կապրիզները. դա մի այնպիսի անբաւականութեան արտայատութիւն է, որ արագ անցնում է մի չնչին բանից միւսի վրա և որը ծագում է ոչ թէ այդ դէպքերից, այլ կողմնակի պատճառներից: Ընդհանրապէս, բարդ հասկացողութիւնների իւրաքանչիւր սահմանումը սովորաբար այնքան պարզ չի լինում, ուստի և կաշխատեմ առաջարկած բանաձևեւ բացարել մի քանի օրինակներով և այն պատճառների վերլուծութիւնով, որոնք առաջացնում են կապրիզներ:

Տիրոն իր «Կամքի հիւանդութիւններ» աշխատութեան մէջ «Կապրիզների տիրապետութիւնը» զլմում (Les maladis de la volonté, եթես. 116) տալիս է մեզ

կապրիզների հակւած մարդու հետաքրքիր պատկերը, որ կարող է ծառայել վերոյիշեալ մեկնութեանս համար թէ իբրև լուսաբանութիւնն և թէ իբրև ապացոյց: Միշին չափով զարդացած կամք ունեցող չափահաս մարդու գործունէութիւնը (այսինքն իր գործողութիւնների վրա ունեցած իշխանութիւնը), ասում է նա, ընդհանրապէս երեք աստիճաններ է ունենում. նախ աւտոմատիկ, անգիտակից գործողութիւններ, հասարակ և բարդ բեֆեկտներ և սովորութիւններ. Երկրորդ աստիճանին՝ զգացմունքներից, զգացողութիւններից և կրքերից առաջացած գործողութիւններ, և վերջապէս՝ բարձր աստիճանին՝ բանական գործողութիւններ: Կապրիզոտ բնաւորութիւնները, օրինակ հիստերիկաւորները, ունեն միայն ստորին երկու գործունէութեան աստիճանները, երբորդը կարծես թէ նրանց մօտ բացակայում է: Ցանկութիւնները յանկարծակի յայտընտեսում և իսկոյն բաւարարութիւն են ստանում, և ապա տեղի են տալիս նման կամ հակառակ ցանկութիւններին, նայելով անհատի մէջ կատարող անընդհատ փոփոխութիւններին: Այստեղ առաջ են գալիս ոչ այլ ինչ, եթէ ոչ կապրիզներ և, շատ սակաւ դէպքերում, թոյլ ցանկութիւններ և անորոշ կամեցողութիւններ: Իսկ եթէ ընդհանրապէս միւսոյն զգացմունքի գերիշխանութեան պատճառով կամեցողութիւնն էլ լինում է յարատե և աւելի մշտական, օրինակ փառասէրների մօտ, այն ժամանակ, թիրօյի կարծիքով, կամեցողութեան հաստատութեանը կարող են խանգարել յաճախակի քայլքայումներն ու գրգռումները, որոնք տեղի

են ունենում մի քանի անհատների օրգանիզմի մէջ։ Ռիբօն նոյնպէս առաջ է՝ բերում հիստերիկաւոր մարդու բնորոշումը, որ տւել է թժիշկ Գոլխարտը, որից և վերցնում ենք մի քանի գծեր։ «Հիստերիկաւոր՝ բնաւորութիւնների մէջ, ասում է նա, տեսնում ենք հաւասարկշութեան բացակայութիւն»՝ բարձր ընդունակութիւնների, այն է—կամքի և գիտակցութեան, մի կողմից, և ստորին ընդունակութիւնների, այն է՝ բնազդների, կրքերի և ցանկութիւնների մէջ, միւս կողմից։ Նրանք վարւում են երես առած երեխաների պէս, ոտներով տրոփում են, ջարդում են կահճկարասին և հարւած տալու անզուսպիպէտք են զգում...»

Թէ և այստեղ Ռիբօն խօսում է չափահաս և անորմալ մարդկանց մասին, բայց և այնպէս լոյս է սըփուում և երեխաների կեանքի այն երևոյթների վրա, որ մենք վերլուծում ենք։ Թէպէտ և նա կապրիզներ ասելով հասկանում է ինչ որ աւելի ընդարձակ բան, քան թէ մենք, բայց նրա հասկացողութիւնը պարունակում է և այն, ինչ որ մենք կապրիզներ ենք անւանում։ Յաճախ առիթ ենք ունեցել վիճելու. այն կարծիքի դէմ, իբր թէ այդ երևոյթների մէջ զլխաւոր գերը կատարում է կամքը. արդէն բերածս օրինակներից, ինչպէս և յետագաներից, պարզ կը լինի, որ այլտեղ գերակըշող նշանակութիւն ունի դժողութեան զգացմունքը, իսկ կամքը հանդիսանում է արդէն երկրորդական գործոն և չունի որոշ ուղղութիւն։ Երբ երեխան կապրիզներ է անում, նա միշտ բարկանում է, բայց չի գիտակցում թէ ինչ է ուղում։ Ակամայ միտս է զալիս

Վոլտերի խօսքերը թէ՝ «Զեր Վեզուվն և ձեր կտնան լի են կապրիզներով. նրանք նման են փոքրիկ մարդկանց, որոնք յաճախ առանց պատճառի բարկանում, զայլանում են»։ Հետաքրքրական է այդ տեսակիտից տիկին Պ-ի վկայութիւնը, թէ երեխաները, կամքի երկարատև և սաստիկ լարումից յետոյ, բզանում աղաղակում են և երկար ժամանակ գրգռւած են լինում, ուրիշ՝ խօսքով, նրանց յոգնած կամքը չի գործում, և երեան են գալիս կապրիզները։ St. Simon-ն ասում է մի մարդու մասին. «Թէպէտ նա ընդհանրապէս համեստ և պարկեշտ էր, բայց շատ էր բարկանում և իրեն չէր կարողանում զսպել, երբ կապրիզներ էր ունենում»։

Կապրիզը ոչ-կապրիզից լաւ զանազանելու համար բիրենք էլի երկու օրինակ՝ հէնց կեանքից վերցրած։ Այսպէս օրինակ, մէկ ու կէս տարեկան երեխան, կերակուր ընդունելուց բաւական ժամանակ անց, ամեն բանից գրգռւում է. նրան տիկնիկ են տալիս, դէն է շպրտում և կամհնում է որ մայրը իրան խտտի. մայրը վերցնում է—նա դայիեակին է ուզում, յատակի վըրա է գլորւում և այլն. գժւար է լինում նրան հանգըտացնել և վճռում են, որ նրան պէտք է կերակրել նըմանօրինակ դէպքերում ծնողները միշտ հեշտութեամբ չեն նկատում այլպիսի գրգռման և կապրիզների պատճառը, Բայց լինում են և այսպիսի դէպքեր։ Երեխան ուրախ է և խաղում է հօր ինչ որ առարկայի հետ. խըլում են նրա ձեռքից այդ զւարձալիքը և նա զառն լաւիս է, նոյնիսկ զայլանում է, վերադարձնում են խլած առարկան և նա նորից զւարթանում է։ Ի՞նչպէս որ

մենք կապրիզ չենք անւանում չտփահասի զբգուելը, երբ նրան յափշտակող գիրքը կորցնում են, նոյնպէս էլ չը պէտք է կապրիզ ասել երեխայի նման դիւրագըրգութեանը: Այստեղից պարզ է, որ դիւրագըրգութեան պատճառները կամ շատ սերտ կապւած են լինում առիթի հետ, կամ նրա հետ բոլորովին ոչ մի ընդհանուր կապ չեն ունենում, և վերջին դէպքում նրանք այնքան էլ ակներեւ չեն լինում ոչ ծնողների և ոչ էլ երեխաների համար:

Դժգոհութեան այդպիսի հեռաւոր պատճառները առաջցնում են ոչ թէ մի որոշակի դիւրագըրգութիւն, որը ուզգւած է դէպի որևէ առարկան, ինչպէս երկրորդ դէպքում (երբ խլեցին զարձալիքը), այլ ընդհանուր դիւրագըրգութիւն, որը միայն առիթներ է որոնում երեսն դալու համար: Առիթ գտնելը միշտ հեշտ է, և իսկայն երեսն են գալիս կապրիզները: Եթէ երեխայի կապրիզները սակաւ են լինում, երբէք չը պէտք է դաստիարակներս նրանցից վախենանք, որովհետեւ պատճառները ուրեմն մշտական բնոյթ չունեն: Կը ոչնչանան պատճառները՝ կանհետանան նաև կապրիզները: Բայց եթէ վերջիններս կրկնում են յաճախ, այն ժամանակ, նըրանց հետ միացած դիւրագըրգութիւնն ու իրան զավելու տկարութիւնը կարող են երեխայի բնորոշ զծերը դառնալ, որոնք, եթէ մարգս նպաստաւոր պայմանների մէջ չը մեծանայ, կը մնան նրա մէջ ամբողջ կեանքի ընթացքում: Այստեղ, որտեղ ուրիշները ուրախ են լինում, կապրիզուր սրանեղում է, շարունակ վատ տրամադրութեան մէջ է լինում և բոլորը խուսափում

են նրա ընկերութիւնից, և այդ բանից տանջուում են թէ ինքը և թէ իր շրջապատզները: Այդ պատճառով էլ հարկաւոր է լուրջ մտածել ընդհանուր դիւրագըրգութիւնը սաստկացնող պատճառների վրա, դիւրագըրգութիւնը սրից ամենամօտ առիթները բըռնկելու համար: Պա դեռ կապրիզներ չէ, որ յետոյ են միայն յաջորդում: Այդպիսի ընդհանուր դիւրագըրգութիւնն պատճառները բաժանուում են երկու խմբի, որոնցից մէկի արմատը երեխայի ֆիզիքական կազմի մէջ է, միւսը՝ հոգեկանի: Այդ պատճառների ուսումնասիրութեանը պիտի անցնենք հիմա:

II

Ընդհանուր դիւրագրգութեան միզիքական պահանջները

Եթէ մենք սկսենք թւել այն ֆիզիքական պատճառները, որոնք երեխաների մէջ ընդհանուր դիւրագըրգութիւն հն յարուցանում, որին միշտ պատրաստ են հետեւ կապրիզներ, մենք պէտք է առաջ բերենք կերակուրի, թարմ օղի, համսպատի պակասութիւնը, հագուստի անբաւարարութիւնը, բարոմետրիքական փոփոխութիւնները, արտաքին կեանքի ամեն տեսակ անյարմարութիւնները, օրգանիզմի հիւանդութիւնը և, վերջապէս, նեարգայնութիւնն ու դիւրագըրգութեան ժառանգական հակումը: Այս ամենը այնքան խիստ են աղջում երեխայի խաղաղութեան և ընաւորութեան

վրա, որ անհրաժեշտ է կանդ առնել այդ պատճառներից իւրաքանչիւրի վրա առանձնապէս:

Երբ չափահաս մարդը օրգանիզմի մէջ քիչ եռանու է ունենում, եթէ նրա առողջութիւնը թոյլ է, այդ դէպում յաճախ չի էլ զգում քաղց, թէև կիրակրի պէտք է ունենում, շատ անգամ զլիսացաւ, անտարբերութիւն կամ դիւրագրգութիւն է զգում: Նոյնպէս էլ փոքրի երեխան, որ անընդունակ է գիտակցօրէն վերաբերել իր զգայութիւններին ընդհանրապէս, սննդի պէտք ունեցած դէպքում քաղց չի զգում, այլ մի ընդհանուր դժգոհութիւն է ցոյց տալիս: Վերջինս, ինչպէս նկատել եմ, իսկոյն չի անցնում կերակուրը ընդունելուց յետոյ, այլ միայն այն ժամանակ, երբ երեխան սկսում է կշտանալ, եթէ, ի հարկէ, նա ծծկեր չէ: Դեռ ևս այդ աստիճան թոյլ զարգացած է լինում նրա մէջ ուտելու կամ խմելու. կարիքի գիտակցութիւնը:

Երեխանների դիւրագրգութեան ամենայաճախակի պատճառներից մէկն էլ հանդիսանում է ինչպէս հանգստութեան պահանջը մկանների շարժողութիւնից կամ նեարդային աշխատանքից յետոյ, նոյնպէս և քննութեան պահանջը:

Բժիշկ Սիկորսկին իր «Առաջին մանկութեան հասակի կրթութիւնը» աշխատութեան մէջ ասում է: «Այդ հասակի ամենաորոշ և առանձնայատուկ զիծը այն է, որ զգայաբանըները արագ յոգնում են... ոչ միայն երեխայի աչքը կամ ականջն է յոգնում, այլ և ուղեղի այն կենարոնները, որոնք տեսողութեան, լսողութեան, կաշւի և ուրիշ տեսակի զգայութիւններից»: Հեղինակը վերև բերած խօսքերով նկատի ունի զլիսաւորապէս զգայութիւնները, բայց նոյնը պէտք է ասել և երեխանների զգացմունքների և կամքի մասին, Մենք տիկին Պի բերած փաստից տեսանք կամքի յոգնածութիւնից առաջացած դիւրագրգութիւնը: Մի ուրիշ մօր ասելով, որ նոյնպէս երկար դիտել է իր երեխաններին, տօնածառի առաջացրած չափազանց ուրախութեան հետեւանքը եղել է այն, որ յաջորդ երկու օրերը իր երեք երեխաններն էլ շատ գրգուած էին: Նման երեկոյթները ծանօթ են իւրաքանչիւր դայեհակին. Երբ երեխան շատ է ուրախանում, վախենում են, չը լինի թէ յետոյ նա սկսի լաց լինել: Այդպիսի դիւրագրգութեանը կարելի է նկատել որպէս հետեւանք նեարդային սիստեմի յոգնածութեան այն չափազանց մեծ աշխատանքից յետոյ, որ պահանջել են ուժեղ տպաւորութիւնները—հաճելի թէ անհաճոյ, միևնոյն է: Ինչ վերաբերում է քննելուն, նրա պահանջը նոյնպէս երեխանների մէջ դիւրագրգութիւն է առաջացնում, որի պատճառը նրանք իրենց կեանքի առաջին տարիներում բոլորովին չեն գիտակցում: Բժիշկ Ֆիլիպովը^{*)} մատնանշում է երեխանների այն դիւրագրգութեան

դիսանում: «Երբ կուշտ և այլ տեսակչտներից ապահովւած երեխան, շարունակում է նա, տհաճութեան զգացմունք է արտայայտում, կամ լալիս է, այդ նշանակում է, որ նա արդէն ձանձրացել է նայելուց, լսելուց և ուրիշ զգայութիւններից»: Հեղինակը վերև բերած

խօսքերով նկատի ունի զլիսաւորապէս զգայութիւնները, բայց նոյնը պէտք է ասել և երեխանների զգացմունքների և կամքի մասին, Մենք տիկին Պի բերած փաստից տեսանք կամքի յոգնածութիւնից

առաջացած դիւրագրգութիւնը: Մի ուրիշ մօր ասելով, որ նոյնպէս երկար դիտել է իր երեխաններին, տօնածառի առաջացրած չափազանց ուրախութեան հետեւանքը եղել է այն, որ յաջորդ երկու օրերը իր

երեք երեխաններն էլ շատ գրգուած էին: Նման երեկոյթները ծանօթ են իւրաքանչիւր դայեհակին. Երբ երեխան շատ է ուրախանում, վախենում են, չը լինի թէ

յետոյ նա սկսի լաց լինել: Այդպիսի դիւրագրգութեանը կարելի է նկատել որպէս հետեւանք նեարդային սիստեմի յոգնածութեան այն չափազանց մեծ աշխատանքից յետոյ, որ պահանջել են ուժեղ տպաւորութիւնները—հաճելի թէ անհաճոյ, միևնոյն է: Ինչ վերաբերում է քննելուն, նրա պահանջը նոյնպէս երեխանների մէջ դիւրագրգութիւն է առաջացնում, որի

պատճառը նրանք իրենց կեանքի առաջին տարիներում բոլորովին չեն գիտակցում: Բժիշկ Ֆիլիպովը^{*)} մատնանշում է երեխանների այն դիւրագրգութեան

*) Филипповъ, Гигиена дѣтей, 1898 г. стр. 299

վրա, որ առաջ է դալիս քնի պակասութիւնից:

Երեխան զրգուում և բղաւում է հագուստից, երբ շորը գրգուում է կաշին ծալքերով և խոնաւութիւնով, երբ խանդարում է աղաս շարժողութեանը, երբ չափազանց տաքացնում է, թէկ իր կեանքի սկզբում երեխան չի էլ գիտակցում իր զդգոհութեան պատճառը: Երեխաներին զրգուում է և սաստիկ ցուրտը, օրինակ, զրօննելիս: Երբ երեխայի մարմինը վարժեցնում ենք և եռանդուն կերպով սովորեցնում հեշտութեամբ տանել օդի և ջրի բարեխառնութեան խիստ փոփոխութիւնները, այդ բանը երբեմն նոյնպէս նրան գիւրագրին է դարձնում. դիւրագրգուութիւնը այս դէպքում ծառայում է որպէս ապացոյց, որ երեխայի վրա չափազանց սաստիկ ներգործութիւն ենք անում: Պէտք է նկատել նոյնպէս, որ երեխաները յաճախ խեղդւած օդում լինում են՝ դիւրագրգիռ, բայց այդ խսկոյն անցնում է, հենց որ տեղափոխում ենք մաքուր օդ ունեցող սենհեակը:

Ինչպէս չափահամները հոգեկան կամ ուրիշ շատ հիւանդութիւնների ժամանակ նախապէս զգում են եղանակի վատանալը, նոյնպէս էլ կան երեխաներ, որոնք ձիւն գալուց առաջ և ընդհանրապէս վատ եղանակից առաջ զրգուած են լինում. և վատ են քնում: Մի ընտանիքում երեխան վատ եղանակի նախագուշակողի դեր էր կատարում նոյնիսկ: Ուժերի ամրանալով՝ երեխաների այդ յատկութիւնը անհետանում է, կամ գոնէ աննկատելի է դառնում:

Նոյնը պէտք է ասել օրդանիզմի հիւանդու երե-

ւոյթների մասին: Երեխան սկզբանի ցուրտը չը գիտի թէ իր մարմին ո՞ր մասն է ցաւում, նոյնը իսկոյն չեն նկատում և ծնողները, այն ինչ այդ ցաւը առաջացնում է ընդհանուր դիւրագրգուութիւն. այդպիսի նոյնիսկ փոքրիկ երեխայի մասին ասում են թէ նա կապրիզներ է անում: Երբ նա քիչ զարգանում է, հեշտութեամբ է ջոկում ցաւած տեղը, ինչպէս ինքը, նոյնպէս և ծնողները. այդ դէպքում ցաւից առաջացած լացը արդէն կապրիզ չի համարւում: Ուրիշ բանէ, երբ պարզ գիտակցած, ձեակերպւած, թէկ թոյլ ցաւը առաջ է բերում ընդհանրապէս վատ տրամադրութիւն. այդ դէպքում կապրիզները անխուսափելի են:

Ընդհանրապէս կապրիզները միանում են և ամեն մի ընդհանուր տկարութեան հետ, որը առաջանում է հիւանդութիւնից, մի քանի դեղերից, չափազանց տաք վաննաներից, մանաւանդ. եթէ այդ տկարութիւնը նեարգային գործունէութեան լարման հետ է կապւած: Բոլոր այդ դէպքերում չափահամներին նմանւելով, երեխաներից շատերը զանազանում են մեծերից միայն նրանով, որ շատ հեշտութեամբ կամ կարելի է ասել մի տեսակ ուրախութեամբ են տանում մարմնի սաստիկ տաքութիւնը (օրինակ ինն ամսական հասակում $40,6^{\circ}$): Տաքութեան բարձրանալու հէնց սկզբից սովորաբար դիւրագրգուութիւն չի նկատում, նոյնպէս և ամենաբարձր սատիբանին, բայց տաքութիւնը յանկարծակի պակասելու դէպքում յաճախ երեխան է գալիս խիստ գիւրագրգուութիւն, այնպէս որ յաճախ այդ երեսյթը ընտանիքներում համարւում է

առողջանալունշան. այդ գիւրագրգոռութիւնը առողջանալու միջոցին նկատում է երբեմննաև չափահասների մէջ:

Այդ երեսոյթը պէտք է բացատրել նրանով, որ սաստիկ տաքութիւնը միանում է մեր մարմնի մէջ նիւթերի արագ փոխանակութեան հետ, իսկ երեխայի օրգանիզմը քիչ է տուժում այդ դէպքում, որովհետև նորմալ, առողջ վիճակի մէջ էլ նիւթերի փոխանակութիւնը նրա մէջ շատ մեծ է: Քսան տարեկան չափահաս մարդու զարկերակը մի ըրպէտմ 70—80 անգամ է խփում, այն ինչ երեխայինը նրա կեանքի առաջին ամիսներում մօտ 140 անգամ. իսկ զարկերակը կարող է համարել նիւթերի փոխանակութեան համար չափս: Եթէ օրգանիզմը հեշտութեամբ է տանում տաքութիւնը, հոգեկան տրամադրութեան տեսակէտից էլ հեշտ է տանում: Բժիշկ Ֆիլիպպովը տաքութեան հեշտութեամբ տանելը բացատրում է նրանով, որ երեխայի զարկերակների պատերը շատ բարակ են, այդ պատճառով էլ հեշտութեամբ են անցկացնում, կորցնում տաքութիւնը *):

Վերջապէս, երեխաների մէջ ընդհանուր դիւրագրգոռութիւն առաջացնող պատճառների թւում մեծ դեր է կատարում երեխայի ներդայնութիւնը, որ հետեանք է կամ ժառանգականութեան, կամ առողջապահական անբարեաջող հանգամանքների բարդելուն: Բժիշկ Սիկորսկին իր վերոյիշեալ գրւածքում մատնանշում է «այն խիստ զանազանութեան վրա, որ նկատ-

ւում է այնպիսի երեխաների զգացմունքների և հոգեկան տրամադրութիւնների մէջ, որոնք գտնւում են, ըստ երկոյթին, ինսամատարութեան և կրթութեան միատեսակ պայմանների մէջ, օրինակ, որբանոցում: Հեղինակը իր դիտողութիւններից հաղորդում է այսպիսի մի իրողութիւն: «Մի երեխայ՝ ամուր, լաւ կազմւածքով, շատ լաւ սննւած, մօտ կէս տարի մեծանում և զարգանում էր կանոնաւոր կերպով. ոչ մի լուրջ հիւանդութիւն չունէր մարմնի ոչ մի գործարանում, քննութիւնից յետոյ չէր նկատում հիւանդութեան որևէ նշան, իսկ միշտ մեծացող քաշը և կանոնաւոր աճումը... ամենից լաւ ցոյց էին տալիս երեխայի նորմալ զարգացումը: Բաժանմունքի մօտ երկու հարիւր երեխաների մէջ... նա ամենից առողջ և ամրակազմ տեսքն ունէր, բայց միենոյն ժամանակ ամենից աւելի լացկան ու անհանգիստ էր. նա երբեմն լալիս էր կէս ժամ, մի ժամ և աւելի, լալիս էր, երբ քաղցած էր լինում կամ կուշտ, գիշեր, ցերեկ: Լալիս չափաւոր արցունք էր թափում, բայց աւելի աղաղակում էր: Արտասուրից հանգստանալուց յետոյ ոչ մի տհաճութեան նշան ցոյց չէր տալիս, նոյնիսկ ուրախ էր»: Այս երեւոյթը կարող է առաջանալ կամ ժառանգականութեան շնորհիւ, կամ արգանդային կեանքի աննպաստ պայմաններից, կամ իրեւ հետեանք սկզբնական կըրթութեան ժամանակամիջոցի: Հակառառողջապահական պայմանների: Նոյն հեղինակը իր մի ուրիշ աշխատութեան մէջ՝ «կրթութեան տեսակէտից ծանր երեխաներ» — բաժանում է նրանց «հեշտ զրգուող նեարդահոգեկան

*) Գիգիենա ձետեй, 98 ր. ստր. 23

կաղմւածք» ունեցող տիպի, «շարժուն-անհանգիստ» տիպի և այլն: Երեխաների ամենափոքր հասակում նոյնիսկ նկատում է խառնւածքի (տեմպերամենտի) մէջ տարբերութիւն, այսինքն՝ արտաքին տպաւորութիւնները ընդունելու աստիճանի մէջ, որ հիմնած է երեխայի ֆիզիքական կազմի վրա: Սանգինիկ տիպին, որ հեշտութեամբ է ենթարկեում զգացմունքներին, շատ յատուկ է գիւրագրգութիւնը, ուրեմն և կապրիզները: Ժամանակակից գիտութիւնը մարդկանց տիպերի է բաժանում էլի ուրիշ հիմունքներով: Բէնը զանազանում է երեք բնաւորութիւններ՝ ինտելեկտուալ (մտաւորական), էմօգիօնալ (զգայունական) և գործունեայ: Դիւրագրգութիւնն ու կապրիզները աւելի յատուկ են էմօգիօնալ բնաւորութիւնների:

Մրանք են, թւում է ինձ, երեխաների ընդհանուր դիւրագրգութեան ֆիզիքական պատճառները, այն պատճառները, որ ծնողները յաճախ չեն նկատում և սովորաբար երեխաները չեն զիտակցում, մինչդեռ դըրանք առաջ են բերում մի շարք կապրիզներ:

Այժմ անցնենք պատճառների մի այլ խմբի, բայց արդէն հոգեկան ընոյթ կրողների:

III

Երեխաների ընդհանուր դիւրագրգութեան հոգեկան պատճառները

Երեխաների ընդհանուր դիւրագրգութեան հոգեկան գլխաւոր պատճառը, այսինքն՝ այնպիսի զիւ-

րագրգութեան, որ չի ուղղւած դէպի մի որոշ առարկայ, այլ ամեն տեղ առիթ է որոնում երեան գալու և երեան է գալիս կապրիզներով, ամենից առաջ պէտք է ճանաչել ձանձրոյթը, որ երկու տեսակ է լինում: Նախ ձանձրոյթը երեան է գալիս այն դէպրում, երբ խաղը, զբաղմունքը, մի խօսքով գործունէութիւնը չափազանց միակերպ է լինում կամ որևէ պատճառով չի համապատասխանում երեխայի հոգեկան վիճակին: Դիւրագրգութեան այդպիսի պատճառը դեռ ևս լուրջ և վտանգաւոր բան չէ, բայց որ հեշտութեամբ կարելի է վերացնել:

Երկրորդ ձանձրոյթը կարող է աւելի խոր արմատներ ունենալ և ծագում է այս ինչ երեխայի անընդունակութիւնից մի առարկայի վրա համեմատաբար երկար կենտրոնանալու: Նա պահանջում է միշտ նոր և նոր հետաքրքիր առարկայ ևնրա ուշագրութիւնը, երկար կանգ չառնելով առաջարկւած զբաղմունքի վրա, թուլանում է և ձգում է նրան տախտկալի անգործութեան, ձանձրոյթի մէջ: Այդ ձանձրոյթը դուք փարատել էք, հնարելով զանազան զւարճութիւններ, իսկ նա աւելի պահանջիստ է դառնում, աւելի ժժգոն շրջապատող առարկաներով և ինքը, չը կարողանալով գտնել իր համար կենտրոնանալու մի իր, մնում է անգործ, և այդ բանից առաջանում է ընդհանուր դիւրագրգութիւն և ապա կապրիզներ: Ահա հէնց այս տեսակ պարբերական ձանձրոյթը առաջնապես կնասակար է լաւ բնաւորութիւն կրթելու: Համար: Զանձրոյթը անգործութեան վարժեցնելով, պատրաստում է ծոյլ աշակերտ,

հասարակութեան ծոյլ անդամ: Դարւինը իր «Զգայութիւնների արտայայտութեան մասին» աշխատութեան մէջ ասում է, որ ձանձրոյթը կաշկանդող կերպով ազդում է արեան շրջանառութեան վրա, որ ուղեղը արեան նւազ ոռոգման պատճառով գործում է ոչ այնքան աշխուժով և զգացմունքը կորցնում է իր ջերմութիւնը:

Երեխանների դիւրագբռութեան ուրիշ հոգեկան պատճառը, որ առաջ է բերում կապրիզներ, հանդիսանում է մի քանի մարդկանց ներկայութեամբ գըրգուելու սովորութիւնը: Ինչպէս որ կան մարդիկ, որոնք երեխաններին հանգստացնելու առանձին ընդունակութիւն ունեն, (*«L'éducation morale»*, Perez, եր. 31) նոյնպէս էլ կան այնպիսինները, որոնք նրանց միշտ գրգռում են և այդպիսով նրանց հասցնում են իրենց ներկայութեամբ յուղւելու սովորութեան: Ես չէի կարող գնազատւել, որ իմ երեխան կապրիզոտ է, բայց երբ նա մօտ մէկ ու կէս տարեկան հասակում դայեակի հետ էր մենակ մնում, որին սիրում և դէպի որը ձգւում էր, միշտ կապրիզներ էր անում: Դայեակը իր բոլոր քնքշութիւններով հանդերձ չէր կարող ստիպել նրան մի բանով զբաղել, դւարձացնել, և այդ պատճառով երեխան սովորեց նրա ներկայութեամբ անդադար և առանց պատճառի գրգռուել: Դայեակն ինքն էլ էր ասում. «Երեխան ձեզ մօտ ուրախ է և խաղում է, իսկ երբ ինձ տեսնում է, իսկոյն սկսում է կապրիզներ անել. դա էլ իմ դժբախտութիւնից է»: Եւ իսկապէս, գրգռուելու ոչ մի առիթ չը կայ, իսկ երե-

խան նրա մօտ արդէն սկսել է լաց լինել: Նոյնիսկ երբեմն երեխայի լացը կտրելը ինձ աւելի դիւրին էր դայեակի բացակայութեան ժամանակ, քան թէ նրա առջև, թէկուզ կինամարդը նոյնիսկ երեխայի լացի ժամանակ լուռ մնար: Եւ չափազանց դժւարութեամբ կարողացանք սովորեցնել դայեակին մի քիչ գոնէ երեխայի դիւրագբռութիւնը վերացնել և այդպիսով ոչնչացնել նրա այդ վատ սովորութիւնը:

Բացի երեխային զբաղեցնել զիտենալուց, այստեղ նշանակութիւն ունի նաև մի մարդու տրամադրութեան միւսին հաղորդւելը: Քչերն են ցանկանում, և էլ քչերն են կարողանում թաքցնել երեխաններից իրենց վատ տրամադրութիւնը, որը և անցնում է նրանց: Դրան նպաստում են նաև անվերջ փնթվնթոցն ու տրառնջները երեխանների հասցէին ամեն մի չնչին բանի առիթով: Շղջապատողների տրամադրութեան ենթարկելը այնքան էլ հեշտ չի բացատրել, բայց այդ երկոյթը նկատում է թէ երեխանների և թէ չափանամների մէջ, այն էլ շատ բազմազան կերպով: Տիկին Պէն պատմում է իր որդու մասին, թէ նա միշտ բղաւում ու բարկանում էր, երբ զայրացած հնդկահաւը հետապնդում էր շանը, թէկ բոլորովին չէր հասկանում այդ երկոյթը. թուզունի կանչը գրգռում էր երեխային. նոյնպէս նա չէր կարող տանել նորածին մանկան աղաղակը: Ընդհանրապէս երեխանները շատ են գրգռում, երբ որևէ մէկի լաց կամ յուզւած ձայնն են լսում (ծիծաղն ու յօրանջելը հօ նոյնպէս անցնում են ուրիշներին): Երբ իմ երկու տարեկան երեխան լսում

էր, ինչպէս ես և կինս որևէ բանի մասին լիճում էինք և բարձրացնում էինք ձայներս, սկսում էր զրգուած բղաւել, սակայն ոչ մի կաթիլ արտասուք չը թափելով. վերջինս երկի նրանով պէտք է բացատրել, որ մենք այդ տեսակէտից շատ դգոյշ էինք: Մենք մի բանի անդամ կրկնեցինք այդ բանը փորձելու համար, և միենոյն հետեւանքը ստացանք: Բէնը, իր «կրթութեան ուսումը» գրքում խօսելով «հօտային ձգողութիւնից և փոխաղարձ համակրանքից» առաջացած ընկերական շարժառիթի մասին, հաստատում է, «որ մասսան եկեղեցական ներգործութիւն ունի, և ուր էլ որ ուղղւած լինի այդ ազգեցութիւնը, համարեա անպարտելի է»: Բայց ես արել եմ ուրիշ տեսակ գիտողութիւն: Իմ անձնապէս գրգուած ժամերին, երբ հոգիս հանգիստ չէր լինում, իսկ որևէ պատճառից անհրաժեշտ էի համարում ինքս խաղալ երեխայի հետ, աշխատում էի ցոյց չը տալ իմ զգացմունքը, և նա բոլորովին ուրախ էր մնում:

Բայց քանի որ գծւար է չարտայայտել իր տրամադրութիւնը, համակրանքներն ու ձգտումները, ուստի այդ ամենի ակամայից երեխային հաղորդելը պայտաւորեցնում է մեղ լրջութեամբ նայել այն շրջանին, որի մէջ նա պէտք է մեծանայ: Երեխայի բնաւորութեան համար վտանգաւոր են այն դաստիարակները, որոնք յաճախ փոխում են իրենց հոգեկան տրամադրութիւնը. երեխան այդ բանում հեշտ կարող է նմանւել իր դաստիարակին և շատ հեշտ ենթարկել դիւրագրգութեան:

Երեխաներին դիտելիս ես չեմ նկատել ընդհա-

նուր դիւրագրգութեան ուրիշ պատճառներ: Բայց իւրաքանչիւր զրգիո, որ ուղղւած է մի որոշ բանի դէմ, իւրաքանչիւր որոշ բողոք, բայց դեռ ոչ կապրիզ, կարող է առաջացնել հոգեկան վատ տրամադրութիւն, ընդհանուր անորոշ դիւրագրգութիւն, և զրա հետ միասին նաև կապրիզներ: Ուստի ուշագրութիւն դարձնենք երեխաների որոշակի դիւրագրգութեան պատճառների վրա:

IV

Երեխաների որոշակի դիւրագրգութեան պատճառները

Որոշ եքոյթի դէմ ուղղւած դիւրագրգութեան պատճառների մէջ պէտք է նկատել մի ամբողջ խումբ, որ կապակցւած է երեխայի ֆիդիքական օրգանիզմի հետ: Օրինակ, չը յագեցած քաղցն ու ծարաւը, հագուստի ամեն մի անյարմարութիւնը, որևէ սովորութեան չը պահպանելը, (օրինակ, սենեհակում ձեռքին մանածելու, ճօճելու սովորութեան), զանազան ցաւերը, և այլն. այդ ամենը, եթէ երեխան դիտակցում է իրեն որոշ երողութիւն, նրա մէջ որոշակի անբաւականութիւն է առաջացնում, որը հեշտութեամբ կարող է փոխւել ընդհանուր դիւրագրգութեան և կապրիզների: Այդ բոլոր պատճառները զանազան կերպով են ազդում երեխայի վրա. շատ մեծ ազդեցութիւն ունի այս պէտքում կըրթութեան չափաղանց քնքշութիւնը: Թէ որքան ախ ու

վախերը, երկիւպն ու կարեկցութիւնները աւելորդ կերպով ճնշում են երեխային, պարզ երկում է ահեղին Շ-ի խօսքերից, որը յաճախ դիտել է, ինչպէս երեխան վայր ընկնելով, շուրջն է նայում թէ արդեօք իրեն նայող կայ թէ ոչ. եթէ ոչ, նա լուսմ է և ուրախանում, իսկ եթէ այո, սկսում է լալ և, ուշագրութեամբ նայելով իր ջարդած տեղին, աւելի խոր ցաւ է զգում: Այսպիսով նա սովորում է ոչ թէ յաղթել փոքրիկ խոչընդուներին, այլ գլուխ խոնարհեցնել նրանց առաջ, և այս բանը մեծացնում է ստացած տպաւրութիւնը և մարդուն անընդունակ է դարձնում գոյութեան կոիւ մղելու, որ հարկաւոր է ամեն մի լուրջ գործում: Զ. Լոկկը իր՝ «Մի քանի մաքեր կըրթութեան մասին» աշխատութեան մէջ ասում է. «Եթէ նոյնիսկ երեխաների ճշմարիտ անախորժութեան և ցաւի ժամանակ շատ դժւար է կտրել նրա լացը, այս դէպքում մի որոշ խստութիւն աւելորդ չի. դիմացկունութիւնն ու համբերութիւնը հոգու և մարմնի վահաններն են»:

Երեխաների որոշակի դիւրագրգութեան պատճառների երկրորդ խումբը վերաբերում է նրանց հոգեկան կեանքին: Երեխան իր կեանքի ամենափոքր հասակից իսկ հանդիպում է իր համար շատ անախորժութիւնների: Դա այնքան էլ երջանիկ կեանք չէ, ինչպէս կարծում են շատերը: Երեխաների դիւրագրացութիւնը նրան շատ վիշտ է պատճառում, բայց և բարեբախտաբար նա ստիպում է մոռանալ այդ վիշտը: Հէնց այդ դիւրագրացութեան շնորհիւ այն ամենը,

ինչ որ հակասում է երեխայի ցանկութիւններին շընչաւոր և անշունչ առարկաների կողմից, նրա մէջ սաստիկ դիւրագրգութիւն է առաջացնում:

Բացի այդ, երեխաներին միշտ գրգում է կեանքի յաճախակի դժւարութիւններին առանց ուրիշի օգնութեան յաղթելու անկարողութիւնը, իսկ այդպիսի գժւարութիւնները նրանց համար աւելի շատ են, քան թէ մեծերի: Այսպէս, օրինակ, նրանք շատ քիչ միջոցներ ունեն ուրիշներին իրենց զգացմունքները, մտքերն ու լինդիրները հաղորդելու, և այդ հանգամանքը չի կարող չը գրգռել նրանց: Սովորաբար այսպէս է լինում. երեխան աշխատում է մի բան բացատրել, նրան չեն հասկանում, նա բարկանում և բղաւում է, այդ գէպքում ծնողները գործադրում են իրենց ամրող եռանդը, որ երեխային գոհացնեն, և նա հասնում է իր ցանկացածին: Նման գործողութեան յաճախ կըրկնելուց շատ երեխաների կամքի գործունէութիւնը այնպէս սերտ կերպով է կապակցւում, գուգորդւում է գրգռման հետ, որ նրանք այլևս ոչինչ չեն ինդրում, այլ իւրաքանչիւր ցանկութեան միջոցին ուղղակի գըրգուռում են: Նոյնը պատահում է և աւելի հասունացած երեխաների հետ, երբ նրանց խնդրին ուշագրութիւն չեն դարձնում, այլ բաւարարութիւն են տալիս միայն այն ժամանակ, երբ նրանք բղաւում և բարկանում են:

Երեխաներին գրգուղ դժւարութիւնների մի ուրիշ տեսակը առաջանում է նրանց օրգանիզմի թուլութիւնից և իրենց անդամներին տիրապետել չը կարողանալուց: Պատշգամբի սանդուխքի երկու աստիճանները ճագեր

չունէին. երեխան գրգռւած անդադար պահանջում էր, որ իլեն խտտեն և ձեռների վրա անց կացնեն այդ աստիճաններից. քիչ գանդաղելը նրան առաւել ևս զբացում էր: Այն ժամանակ մայրը սովորեցրեց նրան առանց որևէ օգնութեան նստած իջնել աստիճաններով և այդպիսով աւելի քչացան գրգռւած աղաղակների շարժառիթները: Այդպիսի խոչնորաններ երեխայի համար շատ կան. դուռը, սեմը, աթոռիկի տեղափոխելը, խաղալիքների հանելը, տիկնիկներին հացցնելը և այլն և այլն: Երեխային շարունակ ծառայելը, զարգացնելով նրա թուլութիւնը, զարգացնում է նաև նրա դիւրագրգիռ պահանջկոտութիւնը, և էլ խանգարում է շրջապատղների զբաղմունքները և ձանձրացնում ու յոգնեցնում է նրանց: Լաւ կըթութիւնը պէտք է հոգայ ոչ միայն երեխանների, այլ և ծնողների գործի թեթեւացնել, թէկուզ հէնց երեխանների օգտի համար: Այն հանրածանօթ միտքը, թէ երեխային ուետք է սովորեցնել իր սեփական ուժերով կառավարւել, վատ է իրագործում մեր հայրերի, մայրերի և մանաւանդ գայեակների կողմից: Շատ գժւարութեամբ կարողացայ պնդել, որ վարժեցնեն երեք-չորս տարեկան մի երեխայի ինքն իրեն հագնեի, բայց որքան նա վարժում էր, այնքան քիչ առիթներ էին լինում հագնեւլիս գրգռւելու: Իր սեփական ուժերով գժւարութիւնները վերացնելու վարժեած երեխան վարժւել է շնորհիւ շրջապատղների խելքի, թէ հէնց հանգամանքների շնորհիւ, ինչպէս գիւղական կեանքում, —աւելի լաւ է ծանօթանում շնչաւոր և անշունչ առարկանների

հետ, նրանցից անհնարին պահանջներ աւելի սակաւ է անում և սակաւ առիթներ է ունենում գրգռւելու: Խաղերի ժամանակ նա աւելի քիչ է պատահում խոչընդուների, որոնք խանգարում են նրա երեխայութեան անընդհատ գործունէութեանը, իսկ անընդհատ գործունէութեան սովորութիւնը լուրջ օգուաներ է տալիս մեր ուշադրութեան: Այդ սովորութիւնը հնարաւորութիւն է տալիս մեզ չը թռչել մի առարկայից գէպի միւսը, մի բան, որ խանգարում է զարգանալու մաշիչ ձանձրոյթին:

Երեխանների ցանկութիւններին բաւարարութիւն չը տալուց առաջացած դիւրագրգութիւնը դիտելիս, ես միշտ պարզ նկատում էի, որ նրա դիւրագրգութիւնը մեծ ուժ չի ստանում, եթէ երեխան հանգիպում է սիստեմատիկ ընդդիմադրութեան իր որոշ ցանկութեան: Այստեղ պակաս գեր չի կատարում այն դիտակցութիւնը, թէ անհրաժեշտ է հնագանդւել: Իմ մէկ ու կէս տարեկան աղջիկս շատ էր սիրում կրծել և ծծել սեղանի կլիօնկան, որ միշտ նրանից ի հարկէ խլում էինք, չանելով սակայն խիստ նկատողութիւններ և երեխան չը նայելով այն ահազին հաճոյքին, որով երկար ժամանակ կրծում էր կլիօնկան, շուտով գաղարեց գրգռւելուց և հանգիստ հպատակւում էր մեծերի պահանջներին. միայն երբ խլողը գայեակն էր լինում, որի ներկայութեամբ սովորաբար կապրիզներ էր անում, այդ գէպում թեթև հպատակւելով, նա բողոքում էր՝ ձայնը քիչ բարձրացնելով, առանց որևէ լացի: Ենթագրում եմ, որ երեխան հեշտութեամբ էր

տանում իր ցանկութեան չը կատարւելը, նախ՝ սիստեմատիկ ընդդիմադրութեան շնորհիւ, որը ոչ մի կապ չունի կամայականութեան հետ, որը գրգռում է ամեն հասակի մարդու և որը երեան է գալիս երեխաների անսիստեմ կրթութեան ժամանակ, և երկրորդ՝ այն բանի շնորհիւ, որ երեխան արդէն լաւ նախապատրաստած էր հպատակւելու անհրաժեշտութեանը։ Վերջին պայմանը, այսինքն՝ հպատակւելու անհրաժեշտութեան գիտակցութիւնը, յաճախ նկատել եմ, հանգստացուցիչ կերպով է ազդում երեխայի վրա։ Ուստի եթէ գործ եմ ունեցել այնպիսի երեխաների հետ, որոնք հոգեպէս այնքան արդէն զարգացած են եղել, որ նախապէս կարողացել են իրենց համար անախորժ իրողութեան հետ հաշտւել, այդ դէքըում ես առաջուց նախապատրաստել եմ այդ իրողութեանը, օրինակ, այն բանին, որ պիտի շուտով պառկեն քնեն, հետաքրքիր խաղից յետոյ նստեն աշխատելու, ընդհանրապէս այն ամենին, ինչ որ նրանք դիւրութեամբ չեն անում, և այդ դէքըում չը սիրած գործը նրանց այնքան էլ անհաճոյ չէր թւում։ Բայց պէտք է և չը մոռանալ հետեւեալը ժամանակով կարճատե փիզիքական անախորժութիւնները, ինչպէս օրինակ՝ զզւելի գեղը, նաշտարով ծակելը, ցաւած տեղի լւանալը և ուրիշ նմանները, հոգեկան կամ աւելի բարդ անախորժութիւններից զանազանում են նախ նրանով, որ շնորհիւ իրենց սաստկութեան չեն թողնում երեխան հաշտւի նրանց հետ գործողութեան կատարման միջոցին, և ապա նրանով, որ յաճախ կարող են կատարւել առանց որևէ կամքի,

առանց հոգեկան որևէ ձիգի երեխայի կողմից։ Նման պայմաններում հարկաւոր է միայն միանգամից հարկագրել երեխային և իսկոյն շտապով զբաղեցնել ուրախացնել, և անախորժ գործողութիւնը արւած կը լինի առանց տանջանք պատճառելու և առանց այնուհետեւ հոգեկան վատ տրամադրութիւն առաջացնելու։ Ռոպէական փիզիքական բռնադպատռմների ժամանակ երեխանները իմ իշխանութեան տակ են, այն ինչքնելու պառկեցնելիս կամ երբեմն նրանց համար ձանձրալի ուսման միջոցին, մի խօսքով, փիզիքական և հոգեկան բարդ գործի ժամանակ իմ իշխանութիւնը աւելի փոքր է լինում. և երեխանները յաճախ դիտմամբ լինում են անուշագրի, անձշտապահ և անհնագանդ։ Հէնց այդ բանից խուսափելու համար հարկաւոր է, որ նրանք նախօրօք հաշտւեն իրենց համար ծանր պահանջի հետ։ Այդ բռնադպատռմը, այդ իշխանութիւնը փիզիքական և ընդհանրապէս ոչ բարդ անախորժութիւնների ժամանակ բացատրեմ օրինակով։ Ես չեմ նախազգուշացնում երեխային թէ պէտք է ընկունի զզւելի գեղ, որ արդէն ծանօթ է իրան, այլ ուղղակի, թէկ փաղաքշական, բայց կտրուկ ձայնով ասում եմ. «Բայց արա բերանդ», և իսկոյն մէկ անգամից լցնում եմ բերանը գեղը։ Ի հարկէ երեխայի համար աւելի հեշտ է, երբ չի տեսնում գեղի պատրաստելը, որը միայն զուր ընդդիմադրութիւն է առաջացնում նրա մէջ։ Լսելով կտրուկ, բայց քաղցր պահանջը, նա աւելի շուտ կը կատարի, քան թէ հաւաքի իր ուժերը շրջապատղների հետ կը ռեւելու համար. մեծ մասամբ գոնէ այդպէս է լինում։

Երեխաների մէջ՝ որոշակի դիւրակրտութիւնը վերացնելու համար այսպիսի միջոցներ առաջարկելով, չեմ կարող ցաւելով չը յայտնել, որ չափահանները յաճախ պմինաշնչին յարգանք անդամ չեն տածում դէպի երեխաների անվաս ցանկութիւնները։ Օրինակ, երեխան գրաւել է նկարը դիտելով, իսկ դաստիարակը նկատում է որ ժամանակ է քնելու և պահանջում է, որ նա իսկոյն թողնի նկարը, մի բովէ անդամ ժամանակ չի տալիս երեխային նոյնիսկ դիրքը թերթելու, և նա պառկում է զրգուած ու կապրիզներ է անում։ Հարկաւոր է աշխատել երեխային հաշտեցնել անախորժ գործողութեան հետ և, խուսափելով երես տալուց, երբեմն էլ նրանց զիջումներ անել, այնպէս, ինչպէս որ անում ենք այդ այն չափահանների վերաբերմամբ, որոնց հետ ապրում ենք, հակառակ դէպրում մենք միշտ հարկադրւած կը լինենք երեխայի կողմից ընդդիմադրութեան հանդիպելու, մի բան, որ նրանց սովորեցնում է կապրիզներ անել։ Դաստիարակը պէտք է աշխատի անցնել երկու ծայրանեղութիւնների միջով, հակառակ դէպրում ճշմարիտ կրթութիւն չէ կարող լինել։

Նկատել եմ նոյնպէս, որ թէկ երեխաները հետաքրքրում են իւրաքանչիւր նորութիւնով կամ իրենց կեանքի որոշ հաստատած կարգի խանգարումով, բայց և այնպէս առաջին տարիներում նրանց մէջ անբաւականութիւն է նկատում, եթէ այդ կարգը խախտում է թէկուկ ամենափոքր չափով, և եթէ միաժամանակ երեխաները ապշած չեն երեւոմի նորութիւնով։ Երբ իմ երկու

տարեկան երեխային կերակրելիս մոռանում էի անձեռոցիկ կապել, նա միշտ ամենայն յամառութեամբ պահանջում էր և նոյնիսկ սկսում էր զայրանալ։ Դարձեալ նա սովորել էր սրբիչը իր փոքրիկ պահարանի վրա տեսնել, եթէ սրբիչը վայր էր ընկնում, մէկ ու կէս տարեկան երեխաս վերցնում էր և միշտ դընում իր տեղը, թէկ մեծ մասամբ երեխաները խաղալիքների մէջ չեն սիրում կարգ ու կանոն պահպանել, այսինքն՝ խաղալիքների որոշ դրութիւնը, դէս ու դէն են ճգում յատակի վրա, բայց չէ որ նրանք կարգ ու կանոն պահպանելու էլ շատ քիչ կարողութիւն ունեն և լաւ չեն հասկանում թէ ինչ բան է սենեակի կարգապահութիւնը։ Նրանք պահանջում են այդ միմիայն չնչին բաների մէջ, ինչ տեղ կարգապահութիւնը իրենց հասկանալի է։ Պէրէն, իր «Երեխայի առաջին երեք տարին» աշխատութեան մէջ խօսելով երեխաների խանդոտութեան մասին, պատմում է մի ծձկեր երեխայի մասին, որը չէր կարող անտարերութեամբ տեսնել, թէ ինչ պէս որևէ մէկը, բացի մօրից, տալիս էր իրան կամ հէնց ձեռքն էր վերցնում կաթի փոքրիկ պտուկը։ Կարծում եմ, որ այստեղ այնքան դեր չի կատարում խանդը, որքան սովորութիւնը։ Առարկաների յայտնի կարգը պահպանելու այդ հակումը որոշ չափով կարող է ծառայել իրեն բացատրութիւն այն փաստի, որ երեխաները թոյլ չեն տալիս թէկուզ ամենաաննշան փոփոխութիւն այն հեքիաթի, որը պատմում է դայեակը նրանց գուցէ հարիւրերորդ անգամ։ Բոլոր այդ երեխաները բացատրում են երեխաների մտաւոր գոր-

ծունէութեան քիչ զարդացած լինելովը և այդ հանգումանքը ազատութիւն է տալիս բեֆլեկտորական շաժումների կոտակելուն, ուրիշ խօսքով, սովորութիւնների զարգանալուն, որոնց խախտումը ընկանօրէն գրգռեցուցիչ կերպով պէտք է աղղի երեխների վրա: Սակայն բոլոր այն երևոյթները, որոնք չերի են զարնում և մեծ ապաւորութիւն են դործուվորաբար աշխուժ երեխաների վրա, հետքքիր և հաճելի են լինում նրանց համար, իսկ բանը թոյլ չէ տալիս նրանց անշարժ մնալու և դըդում է նրանց հոգեպէս անընդհատ զարդանալու:

Անցնենք այժմ մի ուրիշ տեսակ երևոյթի: Պէտք իր միենոյն աշխատութեան մէջ պատմում է ինչպէս մի տարի և տասերեք օրեկան երեխայի ծծաղցնելու նպատակով նստեցրին թղթէ մի մեծ տուրակի մէջ: Սկզբում, չը հասկանալով հանաքի նշան կութիւնը, նա ծիծաղում էր, բայց երբ իրեն կապկլաւած զգաց, յօնքերը կիտեց, սկսեց ձեռքերով ու ուներով հարւածել, կապուտիկեց (աս բարկութեան և թէ երկիւլի նշան է) և այնպէս հրեց ոտքերով, որ տուրակը պատուեց: Նրան ուսերից բարձրացրին և, մին գեռ տոպրակից հանում էին, նրա յանկարծեկի պայծառացած երեսը թւում էր թէ երախտագոտութիւն էր արտայայտում: Իմ երկու ու կէս տարկան երեխան միշտ բարկանում էր, երբ լացւելիս կ'սրբելիս բռնում էինք նրա ուսը, վիզը, արմունկը կ'մի ուրիշ տեղը: Իմ յիշատակարանում կան և այս տակ փաստեր: Երեխային հրամայում են խաղալ և

սիրած խաղը այն ժամանակ, երբ նա ոչնչով զրադած չի լինում և ըստ երկոյթին ձանձրանում է անգործութիւնից, բայց նա բողոքում է. յաճախ նրան մօտեցնում են խաղալիքների պահարանին, երբ ոչ մի կողմնակի բանով չի հետաքրքրութիւն և նա բղաւում է. բայց թէ այս և թէ այն գէպքում նա խսկոյն ուրախանում է, քանի որ այստեղ իր համար ոչինչ անախորժ բան չը կայ: Իմ ուշագրութիւնը աւելի ևս գրաւեցին հետևեալ երևոյթները: Իմ մէկ ու կէս տարեկան երեխան շատ էր սիրում խաղալ ժամացոյցի և նրա բաւականին եղկար շղթայի հետ: Սովորաբար ես բըռնում էի շղթայի ծայրը, միայն թէ այնպէս, որ չը խանգարեմ երեխայի շարժողութիւնները ժամացոյցի հետ խաղալիս. — այդ բանը ինձ հեշտութեամբ աջողակում էր: Բայց հէնց որ նա նկատում էր թէ ես բըռնում ունեմ շղթան, սկսում էր բողոքել և եթէ նրա ուշագրութիւնը չէինք ցրւում, բարկանում էր, իսկ երբ ես թողնում էի շղթայի ծայրը, նա սկսում էր խաղալ այնպէս, ինչպէս առաջ, բայց արդէն բուհու կացողութիւն էլ չը կար, որովհետև մի բոպէ անդամ կացողութիւն էլ չը կար, մոռանում, որ այդ «չըխկ-չըխկ» հայրիկինն է»: չէր մոռանում, որ այդ «չըխկ-չըխկ» հայրիկինն է»: Փորձի համար ես նոյնը կրկնում էի թոկերի և շորերի կտորատանքների հետ և հետեանքը ստացւում էր միենակութանքների հետ անդամագութեան մօյնը: Այդպիսի բողոքները՝ ուղղած տոպրակի հանաւոյնը: Այդպիսի բողոքները՝ ուղղած տոպրակի հրաքի գէմ, ոչինչ անախորժ բան չը պարունակող հրաքի մանների գէմ, շղթայի ծայրից բռնելու գէմ, որ ոչնչի չը լինաղաբում, ստիպեցին ինձ ենթագրել, որ նոյնը լինաղաբում, ստիպեցին ինձ ենթագրել, որ

իսկ այդպիսի փոքրիկ, մէկուկէս կամ երկու տարեկան երեխաների համար արդէն ծանր է ազատութեան սահմանափակման լոկ միտքը:

Երեխաները գրգռում են նաև ինքնասիրութեան վիրաւորանքի զգացմունքից, որը, ինչպէս իմ, նոյնպէս և տիկին Պ-ի գիտողութիւններով, երևան է գալիս արդէն կեանքի երրորդ տարում: Պրէյերի մօտ ես չը գտայ ցուցմունքներ դրա մասին. այն ինչ իմ աղջիկը այնքան ապացոյցներ է տւել, որ այդ զգացմունքը կանուխ է արթնանում երեխաների մէջ, բայց որպէս զի երեխային վերագրելու չը լինենք մի չունեցած յատկութիւն, կը մատնանշեմ յաճախ կրկնած մի փաստի վրա: Աղջիկը խնդրում է մի ինչ որ բան, ծիծառաշարժ կերպով ծոմոելով բառերը. նրա ցանկութիւնը կատարում է. նա հոգեկան լաւ տրամադրութեան մէջ է: Բայց հէնց որ բառերի ծիծառաշարժ աղաւաղման վրա սկսում են ծիծառել, նա բարկանում է, պարզ բողոքելով այդ ծիծառի դէմ: Երկու տարեկան երեխայի բնաւորութեան այդ գիծը երբեմն այնքան ուժեղ է լինում, որ նրանից օգտում էինք որ որէս մի կրթիչ, թէն երբեմն մի քիչ վտանգաւոր միշոցից:

Պէյէն իր յիշեալ աշխատութեան մէջ մատնանը-շում է, որ երեխաները խանդու են լինում դէպի իրենց սիրելի անձնաւորութիւնները, և այդ զգացմունքը յաճախ միանում է դիւրագրգռութեան հետ: «Խանդութիւնը և զայրոյթը», — ասում է նա, «այնքան ակներկ են, նոյնիսկ երկու ամսականից փոքր երեխա-

յի մէջ, որ հազիւ թէ կարիք լինէր այդ բանը շատ օրինակներով ապացուցանելու: Տեղեմանի (մանկան օրատետրի առաջին հեղինակը անցեալ դարի վերջերում) բերած փաստը իր եօթն ամսական որդու կեանըից, շարունակում է Պէրէն, նկատում է յաճախ նաև կրեք ամսական երեխաների մէջ: Մօտաւորապէս նոյն հասակն ունեցող փոքրիկ Մէրին չէր կարող տեսնել որևէ ուրիշ երեխային իր մօր գրկում առանց յօնքերը կիտելու, առանց ծամածութիւններ անելու, առանց կարմրելու, ոտներով խփելու կամ վերջապէս առանց լաց լինելու. այդ ամենը զայրոյթի և խանդութիւն նշաններ են միաժամանակ: Կարծում եմ դուռը կատարելու այստեղ խանդութեան հետ միասին կայ նաև դժգոհութեան զգացում, որ առաջ է գալիս մօր գըր-կում միայն իրան տեսնելու սովորութեան խախտումից:

Այս էջերում մենք յիշատակցեցինք բոլոր գլխաւոր պատճառները երեխաների ինչպէս ընդհանուր, նոյնպէս և որոշակի դիւրագրգռութեան: Բայց որովհետու ծնողները յաճախ ստիպւած են լինում գործ ու հետև ծնողները յաճախ ստիպւած են լինում գործ ու հետև մանուկների դիւրագրգռութեան և կապրիզների հետ, հարկաւոր ենք համարում կանգ տունել պահանջութեան պահապան տեսակների վրա:

V

Դիւրագրգռութեան եւ կապրիզների արտաքին նշանները

Այս հետագօտութեան առաջին գլխում մենք բերինք թէ ինչպէս ֆիզիոգնոմիստները (գիմագէտներինք թէ ինչպէս ֆիզիոգնոմիստները)

ըստ բացատրում են այն դիմագծերը, որոնք ընդհանուր կարծիքով յատուկ են կապրիզոտ բնաւորութիւններին։ Այժմ անցնենք երեխաների դիւրապրագութեան և կապրիզների արտաքին նշանների աւելի մանրամասն վերլուծութեան։

Դիւրագրգուռթիւնը և ապա կապրիզները, ինչպէս մենք արդէն գիտենք, շատ պարզ երեան են գաւլիս մարդու արտաքինի մէջ, մի շարք շարժումներով։ Արտաքին նշանները նկատում են դէմքի, ճայնի, ձեռք ու ոտքի, մարմնի, մի խօսքով երեխայի ամբողջ օրգանիզմի մէջ ու տարածւում են զանազան ուժով և նրա զանազան մասերում, նայելով զգացմունքի զօրութեանը, երեխայի անհատակութեանն և նրա կըթական շրջապատին։ Զգացմունքի և նրա արտայայտութեան մէջ եղած այդ կապը այնքան սերտ է, որ ես յաճախակի ստուգել եմ թէ իմ և թէ երեխայի վրա այն իրողութիւնը, որ արտայայտութիւնը զսպելով՝ զսպւում է նաև ինքը դիւրագրգուռթիւնը. խորապէս զգալ երեխան չի կարող, և միշտ նոր տպաւորութիւններ ստանալու հակումը թոյլ չի տալիս, որ նա իր վիշտը երկարացնի դառն մտքերով և յիշողութիւններով. զարմանալի չէ, որ նրա վիշտը երկարատև չի լինում։ Ճնշում գործ դնելով իր դէմքի և շարժումների վրա, — թէ գիտակցութեան պահանջի, թէ, ասենք, երկիւղի շնորհիւ, — երեխան մոռանում է զայրոյթի պատճառը, և կանգ առնելով իր ինքնազապման առիթների վրա, չափաւորում է զայրոյթի ներգործութիւնը, կարճ ասած՝ ճշշմարտում են Բէնի խօսքերը. «Կատարող շարժում»

Ների զսպումը առաջ է բերում նաև այն նեարդային հոսանքի զսպումը, որ առաջացնում է այդ շարժումներու։ Ուրիշ բան է չափահասների խոր և ուժեղ զգացմունքը։ Եթէ մէկը զսպում է իրեն և չի բղաւում, ոտները արոփում, արտասուք թափում, հեկում և արտնջում, եթէ նա անկարող է արտայայտել, գուրս թափել իր ծով զգացմունքը, այդ դէպքում նրա զգացմունքը ընդգրկելով նրան ամրողապէս, սնուում է նրա մտածմունքներով և յիշողութիւններով և, ուրիշների միահիթարանքից թեթևութիւն չը գտնելով, չի կարողանում հանդարտել։ այդ բանին միաւում է նաև արտայայտելու չը գոհացած ձգտումը, որից մարդը տանջւում է առաւել ևս շատ Բացի այդ, եթէ նա բղաւելով, արտասւելով արտայայտէր ուրիշին իր զգացմունքը, այդ դէպքում նրա զգացմունքը կը համնէր իր զագաթնակէտին, իսկ որքան զգացմունքը ուժեղ է լինում, նոյնքան աւելի է թուլացնում օրգանիզմը, իսկ այս բանը իր հերթին թուլացնում է ընդհանրապէս հոգեկան գործունէութիւնն և մասնաւրապէս զգացմունքները։ Բայց այստեղ խօսում ենք երեխացանքի մասին, որոնք զուրկ են խոր զգացմունքից, ների մասին, որոնք զուրկ են խոր զգացմունքից, և եթէ նրանցից մի քանիսը կարողանում են զըսել իրենց շարժումները, այդ ազդում է նաև նրանց պեր իրենց շարժումները, այդ ազդում է նաև նրանց հոգեկան ամբողջ կազմի վրա։

Դժբանութեան ամենահաստատ արտաքիւ և շը-
բերանի ձեի փոփոխութիւնը, երբ նրա անկիւնները իջ-
նում են, իսկ ստորին ըրթունքը շուր տւած առաջ է գա-
լիս: Այդ տեսակ շրթունքների վեհելը Պրեյելը նկատել է

մանկան ծ-րդ ամսում, իսկ Դարւինը ծ-րդ շաբաթում՝ վերջինս այդ երեսոյթը բացատրում է մի սովորութեամբ, որ անցել է մեզ, նրա կարծիքով, մեր նպաւահայր եղած մի քանի կենդանիներից, որոնք շըրթունքները փողի պէս առաջ են ձգում զանազան ձայներ արձակելու համար։ Պրէյերը ասում է որ շրթունքների այդ փեկլը, որը երբեմն քառակուսի ձև ունի, նկատում է 8 ամսականից մինչև երեք տարեկան հասակը և մեծագոյն դժգոհութեան արտայայտութիւն է։ Առանց լացի, առանց ճիշի, շրթունքներ փեկլը փոքր հասակում երկար չի տեսում. միայն որպէս բացառութիւն պէտք է բիրեմ տիկ. Պ-նսկի վկայութիւնը՝ թէ նրա որդին երկու տարեկան հասակում, առանց ճշալու և լաց լինելու, դժգոհ եղած ժամանակ մօտ մի ժամ ու կէս փրւած էր մնում և յետոյ այդ ինքն ըստ ինքեան անցնում էր։

Անբաւականութեան միւս նշաններն են նաև աչքեր փակելը, գլուխ թեքելը, ճակատի ուղղահայեց կնճիռները, արտասուրները, աչքի տակով նայելը և այլն։

Թէկ խտուտ անելուց, երբեմն ուրախութիւնից էլ են արտասուրներ առաջանում, բայց լնդանրապէս արցունքները ցաւի և վշտի արտայայտութիւններ են, իսկ երեխաների մօտ յաճախ միանում են դիւրագըրգութեան հետ։ Նրանց առաջանալու ժամանակը այնքան տարբեր է և այդ բանի վերաբերմամբ փաստերը այնքան հակասական են Դարւինի և Պրէյերի մօտ, որ վերջինս նոյնիսկ ենթադրում է թէ դրանք աւելի վաղ

են երեան գալիս գերմանացի երեխաների մէջ. հետաքրքիր կը լինէր ուսումնասիրել թէ ինչպէս է լինում այդ բանը մեր երեխաների մէջ։ Սկզբում երեխաները բղաւում են, բայց լաց չեն լինում, ապա կարող են թէ բղաւել և թէ լաց լինել, ինչպէս նաև բղաւել, բայց լաց չը լինել. միայն աւելի ուշ կարող են լաց լինել բայց չը բղաւել։ Ի միջի այլոց Պրէյերը այդ հիման վրա եղբակացնում է, որ բղաւելիս արտասուրները թափում են ոչ թէ արտասուրի գեղձերի ճնշումից, այլ ուղեղի գործողութիւնից, որ առաջացել է զգացմունքի ներգործութիւնից։ Ընդհանրապէս երկրորդ և երրորդ տարում երեխաները աւելի հեշտութեամբ են լաց լինում և աւելի շատ արտասուր են թափում, քան առաջին տարում։ Երեխաների այդ լացը, արտասուրները և վերջը հեկեկանքները, որ յաճախ միանում են բղաւոցների հետ, երբեմն այնպիսի ուժ են ստանում, որ եթէ գուք չափազանց շուտ էք հեռացնում գրգորման և վըշտի այդ արտայայտութիւնները, թոյլչէք տալիս լաց լինել, սիրտը դատարկել, երեխան նորից շուտով կը հեկեկայ և լաց կը լինի բոլորովին ուրիշ առիթով։ Դա բացատրում է շատ հեշտ, գուք միջոցներ էք ձեռք առնում դիւրագըրգութեան դէմ և դրանով կուի էք մտնում նեարդային սիստեմի զրգիուի հետ. դուք յաղթում էք այդ գրգիուն, բայց նա էլ ցոյց է տալիս իր ուժը և օգտական առաջին առիթից հեշտութեամբ ուժը և օգտական առաջին առիթից հեշտութեամբ կրկնութիւն է առաջացնում։ Նկատելի է նոյնպէս, որ շատ արտասելուց և հեկեկալուց յետոյ երեխան աշատ արտասուրուց յետոյ առաջանական է որ նրա ոպանձնապէս ուրախ է դառնում։ Հաւանական է որ նրա

Նեարդային սիստեմի որոշ կենտրոնները յոզնում են և պատութիւն է տրւում միւսներին: Երեխանների դիւրագրգութեանն ու կապրիզներին յստախ հետեղ հեկեկանքների մասին Դարւիխն ասում է, թէ այդ հեկեկանքները առաջանում են նրանից, որ երեխան ձգտում է զսպել ճիշն ու բղաւոցը, բայց չնշառութեան շարժումները թոյլ չեն տալիս այդ: Հեկեկանքներ, նկատում է նա, չը կան կենդանիների աշխարհում: Երեխանների խիստ հեկեկանքներից յետոյ սովորաբար առաջանում է հեծկլտանք, որը կարող է շարունակել և ընի մէջ:

Երեխայի ամբողջ առաջին մանկութիւնը անցնում
է յաճախակի աղաղակներով, որ շատ դէպքերում ար-
տայայտում է նրա զանազան տեսակ անբաւականու-
թիւնը: Մայրերը բղաւոցի եղանակից հեշտութեամբ
հասկանում են երեխաների կարիքները: Այդ աղաղակ-
ների նկարագրութիւններով հետաքրքրուողները կարող
են դիմել Պրեյերի վերոյիշեալ «Die Seele des Kindes»
գրքի երրորդ գլխին: Երեխայի իւրաքանչիւր գիւ-
րագրգոռութիւնն և նրան հետևող աղաղակները այնքան
սերտ են կապակցում իրար հետ, որ ապագայում եր-
կար մաքառում է պահանջւում երեխային ընտելացնե-
լու զսպել այդ աղաղակները: Եթք իմ երեխան երկու
տարեկան և տասն ամսական էր, նա շրջապատողների
ազգեցութեան տակ յաճախ զսպում էր իր աղաղակ-
ները, բայց մի քիչ յետոյ նորից սկսում էր բղաւելը,
վերջինը ըստ երևոյթին չէր համապատասխանում նրա
իսկական ցանկութեանը, և նա ասում էր թէ բղաւո-

զը ինքը չէ, այլ իր տիկնիկը։ Միևնույն ժամանակ
պարզ էր միանգամայն, որ նա չէր կրկնում ուրիշի
խօսքերը, այլդաս սեփական հնարածն էր, որ ցոյց էր տա-
լիս թէ որչափ գժւար է դիւրագրգռութեան միջոցին
աղաղակելու պահանջին յաղթել։

Մինչև այսօր գեռ չի պարզւած աղաղակի նշանակութիւնը առողջութեան համար երեխաների ամենափոքր հասակում։ Կան մարդիկ, նոյնիսկ բժիշկներ, որոնք ուժգին և տեսական աղաղակները երեխաների համար վասակար չեն համարում, որովհետև նպաստում են ձայնի գործարանի և թոքերի զարգացման, և արեան շրջանառութիւնը գրգռելով՝ փոխարինում են այն շրջանառութիւնը, որոնցից զրկւած են բարուրաւած երեխաները։ Այս ամենը խոստովանելով հանդերձ, ևս այնուամենայնիւ այն կարծիքի եմ, թէ պէտք է եռանդուն կերպով խուսափել նմանօրինակ աղաղակներից։ Մկանների, ձայնի և շնչառութեան գործարանների զարգացումը հնարաւոր է նաև ուրախ շարժումների, բացականչութիւնների, խոսակցութիւնների և այլ գեղագերում, ուր մենք խուսափում ենք նեարդային գըլը քերում, մի բանից, որ անհրաժեշտորէն լինում է գոսումից, մի բանից, որ կարդային կարող է երեխային զգալի վնասներ հասցնել։ Խփելով կարող է երեխային զգալի վնասներ հասցնել։ Պրեյքը, համոզելով, որ իր երեք ամսական՝ կտառ-Պրեյքը, համոզելով, որ իր երեք ամսական՝ կտառ-

մի քանի ժամից արթնացել բոլորովին կազդուրւած: Այսուամենայնիւ երկար աղաղակներից առաջացող վասից խոյս տալու նպատակով նոյն Պրէյերը խորհուրդ է տալիս այդպիսի երեխային որեիցէ անախորժութիւն պատճառել, ձեր պատճառած անախորժ զգացմունքը, ինչպէս օրինակ՝ երեսին սառը ջուր սրսկելուց, շուառվ կանցնի, և երեխան արդէն հոգեկան լաւ տրամադրութեան մէջ կը լինի:

Երբեմն էլ չափազանց ուժեղ աղաղակները, բայց ոչ բարկութիւնը, սկսում են երեխայի ամենախոր քնի ժամանակ, դեռ ևս աչքերը փակ դրութեան մէջ: Այդ պիսի բղաւոցի և լացի համար չի կարելի նկատել մի որոշ պատճառ և երեխան իսկոյն չի հանդարտուում: Այդպիսի երեսոյթը բժշկութեան մէջ կոչում է գիշերային վախ: Սկզբում այդ բանը համարում էին ուղեղի տկարութեան նախանշան, բայց փորձը ցոյց տևեց, որ այդ երեսոյթը յաճախ անհետեանք է անցնում:

Երբ երեխան սկսում է խօսել, զիւրագրգուած ժամանակ շատ անգամ աղաղակների հետ միասին այնպիսի բառեր է արտասանում, որոնք ոչ մի ընդհանուր կապ չունեն զրգիսի պատճառի հետ: Իմ մի տարի և ինն ամսական երեխան համարեա ամեն անգամ գրգռելիս իր սովորական «թպրուա, թպրուա»-ն էր բղաւում, թէպէտ պարզապէս բարկանում էր այն բանի համար, որ իրան զբօնելու չեն տանում: Տիկին լ-ի երեխան ամեն անգամ, երբ բարկանում էր իրան սայլակից վեր կացնելու համար, բղաւում էր՝ «կաթ տուր, կաթ տուր»: Այդպիսի աղաղակներ մի քանի

երեխաների մօտ շարունակւում են շատ երկար: Մի մօր ասելով՝ «Նրա երեխան երեք ժամ անընդհատ բղաւում էր՝ «արև չեմ ուզում»: Սկզբում այդ բացական-չութիւնները համապատասխան են լինում զրգիսի պատճառին, բայց յետոյ գիւրագրգութեան զգացումի հետ յաճախ միանալուց, նրանց հետ այնպէս են կապակցում, զուգորդութեան մէջ մտնում, որ գիւրագրգուութեան երեան գալու իւրաքանչիւր գէպքում երեխայի յիշողութիւնը վերաբտագրում է նաև այդ բացական-չութիւնները: Թէկուզ նոր գէպքին բոլորովին անհամապատասխան լինեն: Երբեմն սրանց միանում են և այնպիսի շարժումներ, որոնք ոչ մի հիմք չունեն: Այսպէս, երեխան օրական երկու անգամ գրգռուած բղաւում էր. «նան, նան», և ապա պոկ գալիս վազում էր գէպի նանը, երբ վերջինս վերադառնում էր նրա մօտ նախաճաշից կամ ճաշից յետոյ: հէնց միենոյն երեխան լաւ զիւտենալով, որ հօր դարակից գիրք վերցնել արգելած է, բղաւում էր «նան, նան» և փաթթւում նանի վզովը, երբ վերջինս առնում էր նրա ձնորդից գիրքը: բայց միենոյն ժամանակնրա գրկում չէր մնում, որովհետև բարկանում էր նրա վրա: Այսաեղ արդէն յիշողութիւնը կապակցել է այնպիսի գրգիռը, բառերը և շարժումները, որոնք ոչ մի ներքին կապ չունեն երար հետ:

Բարկացածի արիւնը տալիս է կաշւին, աչքերին և լորձաթաղանթներին, որից երբեմն արիւնահոսութիւն է առաջանում: Այդ պատճառով էլ չափազանց բարկացածը կարծես ուռչում է. «բոլորովին ուռել է

բարկութիւնից», —ասում են նրա մասին: Կօպէնհագէնի պրոֆեսոր Լանդէն իր «Ա.Փէկտներ» բրօշիւրում, վերլուծելով բոլոր այդ երկոյթները, ցոյց է տալիս, որ բարկացողը զանազանում է ուրախացողից նրանով, որ արեան այդ տալը աւելի սաստիկ է լինում և բացի այդ ուռչում են խոշոր երակները, մանաւանդ ճակատի վրա:

Իրանի և վերջաւորութիւնների մասին խօսելով՝ Դարեինը պատմում է, թէ ինչպէս երեխանները հոգեկան վատ տրամադրութեան ժամանակ մի ուսը բարձրացնում են: Բարկացած երեխան, ասում է նա, հօր կամ մօր ծնկան նստած բարձրացնում է նրանց կողմը դարձրած ուսը, ապա հեռացնում է կարծես թէ փաղաքշանքից խուսափելու նպատակով, և ապա ուսով ետք բոթում՝ կարծես թէ վիրաւորողին բրդելու դիտաւորութեամբ: Ես տեսել եմ մի երեխայ, շարունակում է նա, որ կանգնած էր միւսներից հեռու և իր զգացմունքներն արտայայտում էր նրանով, որ բարձրացնում էր մի ուսը, նրանով ետ մղում, և ապա շուռ գալիս ամբողջ մարմնով: Նմանօրինակ երկոյթ յատուկ է և մեր երեխաններին: Իմ հարց ու փորձին կապրիզների արտաքին նշանների մասին, շատերը պատասխանել են, որ ոչ միայն փոքր երեխանները, այլև չափահանները ուսերը բարձրացնելու սովորութիւն ունեն:

Երեխանները գրգուած դէպքում շարժում են ուժեղ կերպով մանաւանդ ձեռքերը: Դարւինը հետեւալ կերպով է նկարագրում իր երեխայի շարժումները: «Տաս-

նկմէկ ամսական երեխաս դէն էր հրում և փշրում խաղալիքը, երբ այն խաղալիքը չէին տալիս, որն ուզում էր. այդ վերջին գործողութիւնը (փշրելը), շարունակում է նա, համարում ևմ բարկութեան բնազդական արտայտութիւն, որ նման է ձւից նոր դուրս եկած կոկորդիլոսի ծնօտներով չըխէրթկացնելուն, և չեմ համարում ցաւ պատճառելու ցանկութիւն: Երկու տարեկան և երեք ամսական հասակում նա սովորութիւն դարձրեց իրեն դուրս չեկող անձնաւորութեան վրա գիրը, ձեռնափայտ և ձեռքն ընկած ամեն բան շպրտելը. այդ միւսնոյնը ես նկատել եմ և միւս տպաններիս մէջ, բայց աղջիկներիս մէջ չեմ նկատել նըման հակման նոյնիսկ նշոյներ, և եղրակացնում եմ, որ մանուկները ժառանգաբար ստանում են առարկաներ շպրտելու հակումը»: Զափազնց զայրոյթի դէպքում, երեխան այլիս չի բաւականանում ձեռքերով. նա խընդունում է ոտքերով, ամբողջապէս վեր վեր է թռչում, փուռ է փուռ և պատին է տալիս, նստում է յատարօրուում է, իրեն պատին է տալիս, նստում է յատակի վրայով, կի վրա, պաւակում է, գլորում է յատակի վրայով, կի այլն: Պրոֆեսոր Լանդէն ասում է. «Բարձրծում է և այլն: Պրոֆեսոր Լանդէն ասում է. «Բարձրծում է պէտք է զգում ոչ միայն ընդհանրապէս ուժեղ կացածը պէտք է զգում ոչ միայն ընդհանրապէս ուժեղ շարժումներ անելու, մկանները ձգելու, այլ ուզում շարժումներ անելու, մկանները ձգելու, այլ ուզում շարժումներից անելու, մկանները ձգելու: Եթէ ներ, որոնցից աւելի աղմուկով, գոռզուցով և ախալէս, որ է այդ ամենը անել աղմուկով, գոռզուցով և ախալէս, ինը զգալ նոյնիսկ ցաւ կամ զգայական ուժեղ տպաւունը զգալ նոյնիսկ ցաւ կամ զգայական ուժեղ տպաւունը է անցնում, բութիւն: Նա շպրտում է ինչ որ ձեռքն է անցնում, առութիւն: Նա շպրտում է ինչ որ ձեռքն է անցնում, բայց աւելի ախորժակով կարծը և փշրուղ առարկան պայց աւելի ախորժակով կարծը է լինել: Եթէ կուք պինդ բռնէք նրա ձեռքը, բդաւէք վրան, կամ

վերջապէս միայն ծաղրէք, երբ կը հանգստանայ, նաւ յելով թէ երեխան որչափ է սովորել այդպիսի շարժումներ անելու, այդ գէպքում երեխան կըսկսի զգալի կերպով զսպել իրեն և ձեռք քաշել այդ սովորութիւններից: Շուտով կը քննենք այդպիսի միջոցների նպատակայարմարութիւնը:

Դիւրագորութեան բոլոր այս երեսյթները աւելորդ գրգում են նեարդային սիստեմը. նրանց հետ կապւած են կապրիզները, որոնք ապա առաջացնում են նոր կապրիզներ և շատ լիսասակար են դառնում իրենց հէնց երեխանների համար: Այդ տեսակէտից հետաքրքիր է տիկին լ-ի երեխան, որ գրգուելուց հանդարտելով առում էր՝ «կապրիզներս քշեցի» և միշտ չափազանց ուրախանում էր այդ բանի վրա: Հետևեալ գլխում կը տեսնենք թէ ինչպէս կարելի է ազատել երեխային կապրիզներից և ինչպէս կարելի է օգնել նրան «կապրիզները քշելու» կամ չափաւորելու:

VI.

Կապրիզները կանխող միջոցներ

Կապրիզների հետ կուելու միջոցներից ամենամեծ նշանակութիւնն ունեն նրանք, որոնք վերացնում են հէնց այդ կապրիզներն առաջացնող պայմանները: Նրանց վրա հարկաւոր ուշադրութիւն դարձնելով և այդ տեսակէտից երեխային գոհացուցիչ պայմանների մէջ դնելով, մենք դրանով կազատենք նրան բնաւո-

րութեան մի վատ յատկութիւնից; իսկ մեզ ինքներիս թէ մեզ և թէ երեխաների համար ծանր կուից: Դըրանք այսպէս ասած կանխող միջոցներն են. յետոյ մենք կը քննենք նաև արմատախիլ անող միջոցները:

Առաջնակարգ տեղը բռնում է երեխաների առողջարմին և դրանով էլ առողջ հոգի ժառանգելու: Նեարդայնութեան ժառանգաբար անցնելը, ինչպէս և ծնողների առողջութեան ազգեցութեան հարցը կասկածի երբէք չի կարող ենթակայ լինել, և դա իւրաքանչիւր հօր և մօր վրա պարտականութիւն է զնում, արգէն երեխաների սիրուն, պահպանել իրենց առողջութիւնը: Իսկ եթէ աննպաստ ժառանգականութեան պայմանները արգէն կատարւած իրողութիւն են, մի բան, որ ծնողներն ու դաստիարակները պէտք է միշտ նկատի ունենան, այդ գէպքում նրանցից պահանջւում է առանձին հոգացողութիւն երեխանների առողջապահիկ շրջապատի մասին, որպէսզի հնարաւոր լինի չափաւոր քշելու այդպիսի ժառանգականութեան վատ հետևանքները:

Բայց առողջապահութիւնը կարևոր է և իւրաքանչիւր երեխայի համար, միայն թէ ոչ այն հատուկոր չէնքների վրա հիմնած առողջապահութիւնը, որ անմտօրէն գործ են զնում ծնողները, այլ մեր օրգանիզմութիւն գործ յատկութիւնների ճիշտ հասկացողութեան մի գլխաւոր յատկութիւնների ճիշտ հասկացողութեան վրա հիմնածը: Այդպիսի առողջապահութիւնը օրգանիզմին առողջութիւն կը տայ, կամրապնդի, այսինքն՝ կը վարժեցնի գիւրութեամբ դիմադրել պատահական աննպաստ պայմաններին, և այն ժամանակ աւելի քիչ

առիթներ կը լինեմ դժոհութիւնների և զիւրագլուգութեան:

Դիւրագրգութիւն և կապրիզներ առաջացնուի
հոգեկան ամենազլիսւոր պատճառներից մէկն, ինչպէս
արդէն գիտենք, պէտք է համարել ձանձրոյթը: Եթէ
ձանձրոյթն առաջանում է նրանից, որ երեխան չը
գիտի ինչպէս իբրեւ գւարճացնի, կամ անընդունակ է
որոշ առարկայի վրա ուշադրութիւնը կանգնեցնել,
այդ գէպքում ծնողները պարտաւոր են լրջօրէն մտածել
դրա մասին: Առաջին գէպքում անհրաժեշտ է զարգա-
ցնել երեխայի ինքնազործունէութիւնը, երկրորդում
ձգտել, որ երեխայի ուշագրութիւնը որքան կարելի է
քիչ թոշի մի առարկայից միւսը: Բազմաթիւ միջոցներ
կան երեխայի մէջ ինքնազործունէութիւն զարգացնե-
լու. նրանցից ամենազլիսւորը առաջին հասակի հա-
մար՝ երեխային ինքնազուխ թողնեն խաղի միջո-
ցին և, որքան հսարաւոր է, բոլոր գծւարութիւնների
ժամանակի: Որքան սակաւ նրան օգնենք, նախապէս
կանոնաւոր պայմանների մէջ զնելով նրան, այնքան
նա շուտ կը սովորի իրենյարմար զբաղմունք գտնելու:
Անհրաժեշտ գէպքում ցոյց տէք, բացարեցէք նրան
խաղը, բայց աշխատեցէք ինքներդ չը խաղալ նրա հետ.
հակառակ գէպքում նա միշտ կը պահանջի մասնակ-
ցէք և բացասական պատասխան ստանալով կը տիրի
անգործութիւնից ու կը գրգռի: Զափահամների ան-
ընդհատ մասնակցութիւնը երեխաների խաղերին, բա-
ցի այն, որ մեացնում է նրանց մէջ ամեն մի ձեռնե-
րէցութիւն, վասակար է և այն պատճառով, որ ոգե-

ւորելով նրանց արհեստական կերպով, աւելիրդ անդամ
զրգութ է նրանց նեարդային սիստեմը: Իսկ փոքրիկ
երեխաների մէջ ուշագրութեան տևողականութիւնն զար-
գացնելու համար հարկաւոր է, նախ, երբէք չընդհա-
տել նրանց կենտրոնացած ուշագրութիւնը խաղի,
զբաղմունքի և առհասարակ որևէ ուրիշ ժամանակ, և
յարգանքով վերաբերել նրանց գւարճութիւններին և
երկրորդ՝ երեխային չը յոգնեցնելով, չը բոնադատե-
առարկան կամ ցոյց տալ վերջինի մէջ նոր, հետա-
ռըրբական կողմեր: Այսպէս, երկու տարեկան երե-
խան հիւրականութ տեսնում է մի պատկերազդ գիրք,  մա-
պա վայր է դնում, զնում է առանձնասենեակ մա-
տիտ կամ թուղթ խնդրելու: Հայլն ասում է, «Լաւ,
միայն թէ գիրքը նախ ետ բեր»: Երեխան զնում է
զրքի ետեից, բայց ձանապարհին նրանով նորից այն-
պէս է հրապուրութ, որ շարունակում է դեռ էլի որոշ
ժամանակ զննել, և այդ բանին է, որ հարկաւոր էր
ձգտել: Մի ուրիշ դէպքում, երեխան քարտերից տուն
է շինում և վերջապէս այդ գւարճութիւնը նրան ըս-
է ձանձրացնել, բացատրեցէք նրան նոյն կար-
կսում է ձանձրացնել, բացատրեցէք նրան նոյն կար-
տերից տուն շինելու մի ուրիշ ձև, և երեխան կը շա-
տերից տուն շինելու մի ուրիշ ձև, և երեխան կը շա-
տերից տուն նա վարժութ է ուշագրութիւնը պահել միե-
նութեան նա վարժութ է ուշագրութիւնը պահել միե-
նոյն առարկայի վրա և աւնիլի սակաւ նոր տպաւորու-
թիւններ է պահանջում, սակաւ ձանձրանութ և հե-
թիւններ է պահանջում, սակաւ վատ տրամադրու-
տեապէս սակաւ ընկնում հոգեկան վատ տրամադրու-
թեան մէջ:

Ահագին նշանակութիւն ունի երեխայի նաև հնաւզանդութիւնը: Դա հարկաւոր է ոչ թէ դաստիարակի յարմարութեան համար, այլ որպէսզի երեխան սովորի հպատակեցնել իր գործողութիւնները որոշ պահանջներին: Սկզբում այդ պահանջները կը գրւեն գրսից, արտաքին աշխարհից, իսկ յետոյ նա ինքն իր համար գործունէութեան սկզբունքներ կը կազմակերպի, որոնց և կը գիտենայ հպատակւել:

Երկու տարեկան մի երեխայ, լսելով այն անձնաւորութեան ձայնը, որի մօտ չի սովորել գրգռւել և որը, համոզւած է, անպայման պիտի հակազրի իր ամեն մի կապրիզին, իսկոյն և եթ դադարում է կապրիզներ անելուց: Հասակաւոր երեխաների ինքնազլսպումը կամ հնազանդութիւնը մի քանիսը փորձում են առաջացնել երեխայի բանականութեանը դիմելով, բայց այդ միջոցը թոյլ է, քանի որ համարեա բացառապէս զգացմոնքներով ապրող երեխաները շատ դըււարութեամբ են ենթարկում բանականութեանը, նոյնիսկ յաճախ նրանց ուժերից վեր է՝ հասկանալ ձեր առաջ բերած պատճառաբանութիւնները: Ասում են, որ երեխայի համար ծանր է սեփական բանականութեան դատին ենթարկելը. նա այդ չի սիրում և իրեն ձնշւած է զգում բանականութեան և զգացմունքի այդ անբնական կուից: Սակայն, երեխայի բարոյական վարեը կազմակերպելու գործում անկարելի է չը դիմել նրա, թէև թոյլ բանականութեան գործունէութեանը: Հարկաւոր է լինում շատ բան բացատրել նրան, միայն թէ այն ժամանակ, երբ նա հանգիստ է լինում: Նոյնպէս

պէտք է աշխատել երեխային ներշնչել այն համոզմունքը, որ այս ինչ քայլին անպայման հետևում է որևէ անախորժութիւն, այդ ժամանակ երեխան, շատ հասարակ կերպով, անախորժութեան մէջ չընկնելու համար, կը սկսի զսպել իրան այդ քայլն անելուց և այնչափ կը վարժւի այդ հայեացքին, որ ապագայում էլ այդ քայլը նրան անյարմար կը թւայ: Եթէ մենք ոչ յաճախ օգտւելու լինենք երեխայի այդօրինակ կշռադատութիւնից, մեր սանը դուրս չի գայ միանցարոյական գործնական մարդ, մանաւանդ որ և անախորժութեան մէջ էլ, որից նա խուսափում է, կարող է լինել բացառապէս բարոյական պատիժ: Զէ՞ որ ոչ մի մարդ զերծ չէ այդպիսի կշռադատութիւնից, որը լաւագոյն մարդիկ հիմում են անկաշառ բարոյական սկզբունքների վրա:

Շատ աւելի նպատակայարմար է ներգործել երեխայի զգացմունքի վրա: Նրա հնազանդութիւնը կարող է առաջ գալ դէպի զամտիարակը տածած սիրուց, որի վրա կարելի է զնել մեծ յոյսեր: Եւ իսկապէս, այդ սէրը հանդիսանում է անհրաժեշտ պայման երեխաներին կանոնաւորապէս զեկավարելու համար և միաժամանակ կարող է կրթական գործում մեծ դիւրութիւն պատճառել: Բայց և այդ սէրը, եթէ սրեխան չի գիտակցում իր պարտականութիւնը, դեռ կս գրաւական չի ապագայ մարդու բարոյական դառնալուն: Դաստիարակին սիրելուց հպատակւող երեխան, որ վարձատրում է նրա ժըմի պիտով, լինում է միայն իր համար զիւրեկանը, ուսպիտով, լինում է միայն իր համար զիւրեկանը, ուսպիտով, լինում է միայն իր համար զիւրեկանը: Բոլորու պարտականութիւնների գիտակցութիւնը:

վին անթոյլատրելի է դաստիարակին երկիւղից հնաւ-
զանդելը, որովհետև այդ զգացմունքը երեխային թոյլ
չի տալիս ազատօքէն օգտւել իր բոլոր ընդունակու-
թիւններից, որով և վերջիններու չեն կարող կատարե-
լապէս զարգանալ: Միւս կողմից էլ նոյնիսկ ցանկալի
է որոշ տեսակի երկիւղաձութիւն, ոչ թէ վախ դաս-
տիարակից, այլ աւելի ճիշտն ասած, նրա կամքը ըս կա-
տարելու վախ, երբ դաստիարակի կամքը երեխայի հա-
մարնոյնն է, ինչ որ պիտի լինի, ինչ որ մարդուս պար-
տականութիւնն է: Այդ երկիւղը ոչ թէ եսասիրական, այլ
այլասիրական բնաւորութիւն ունի: Հեշտ չէ երեխա-
յին կանոնաւոր յարաբերութիւնների մէջ դնել շրջա-
պատողների հետ, բայց դրան պէտք է ձգտել, և ան-
պայման հնարաւոր է դրան համանելը:

Դիւրագրգութիւնն և կապրիզները կանխող ամե-
նալաւ միջոցներից մէկն է անընդհատ հսկելը, որ ե-
րեխայի մէջ, եթէ հնարաւոր է, հէնց առաջին կիսա-
մեակում բուն չը դնեն այնպիսի սովորութիւններ, որոնք
ապագայում չափահաների կողմից ընդդիմագրութիւն,
իսկ երեխանների կողմից դիւրագրգութիւնն և արցունք-
ներ պիտի առաջացնեն: Օրինակով բացատրենք: Երե-
խան հաց ուտելիս ոչ այնքան լուրջ է պահում իրեն,
չարութիւն է անում: Ծնողները սկզբում խրախուսում
են նրան, իսկ վերջը չեն կարողանում յաղթել այդ
վատ սովորութեանը, և ամեն անգամ հացի ժամանակ
աղմուկ է բարձրանում: Դրանում մեղաւոր են նրանք,
որոնք սկզբներում թոյլ են տեկ նման չարութիւններ:
Պէտք է նոյնպէս ուշագրութեամբ հետեւել, որ երեխան

հազնւելիս, լւացւելիս, սանրւելիս և այլն լաց լինելը
կամ բղաւելը սովորութիւն չը դարձնի: Եթէ երեխան
այդ գործողութիւններից որևէ մէկի ժամանակ որևէ
պատճառից բղաւի կամ լաց լինի, պէտք է աշխատել,
որ հետեւեալ անգամ միենոյն գործողութիւնը կատար-
էր երեխայի հոգեկան ամենալաւ տրամադրութեան
մէջ: Այլ կերպ նա ամենոյն հեշտութեամբ կը սովորի
նման գէպքերում բղաւել, թէկուզ այդ գործողութեան
մէջ ոչ մի իրեն անախորժ բան չը լինի: Մի խօսքով,
սկզբներում ամենայն հեշտութեամբ ոչնչացնելիք երե-
ւոյթը ապագայում սովորութիւն դառնալով առաջ կը բե-
րի յամառ կապրիզներ և արտասուրքներ:

Վիրջիններիս առաջն առնելու համար շատերը դի-
մումնեն արգելանքներին և խրատներին, մանաւանդ երբ
ծնողները, տանից հեռանալիս՝ երեխաններին դաստիա-
րակչում կամ դայեակի խնամքին են յանձնում: Այդ
բիջոցը թերեւս որոշ նշանակութիւն ունի այն հասա-
կաւոր երեխանների նկատմամբ, որոնք արդէն գիտեն
կառավարել և որոնք աւելի երկար կարող են
իրանց կառավարել և որոնք աւելի երկար կարող են
կանգ առնել մի տպաւորութեան վրա, այս գէպքում
կանգ առնել մի տպաւորութեան վրա: Բայց
իրանց արւած պատէրի տպաւորութեան վրա: Բայց
երեխանների համար այդ միջոցը բոլորովին ան-
փոքը երեխանների համար այդ միջոցը բոլորովին ան-
փոքը երեխանների համար այդ միջոցը բոլորովին ան-
փոքը երեխանների համար այդ միջոցը բոլորովին ան-

տողութիւնների, արգելանքների, խրատների և սաստումների ազդեցութիւնը, որոնք պարփակում են թէ սէր և թէ հաստատակամութիւն, լուսաբանուում է հիպնոսական ներշնչումների ուսումնասիրողները դրանց մեծ նշանակութիւն են տալիս կրթական գործում: Հիւյօն իր «L'héritage d'éducation» գրքում ասում է, որ մեր ոչ այնքան էլ վատ երեխային ուղղած բացականչութիւնները՝ «որով վատ տղայ ես»՝ նրան աւելի ևս վատացնում են, և ընդհակառակը նրա լաւ յատկութիւններին վըստահելը բարձրացնում է նրան: Մինչև այժմս այս երևոյթը բացատրում էր երեխաների վրա արած բարոյական սաստումով, բայց այսաել անհրաժեշտ է նաև նկատի ունենալ և հիպնոսական ներշնչումները, որոնցով, հեղինակի ասելով, մենք յաճախ օգտառում ենք, թէպէտ և բոլորովին անգիտակցորէն, երեխաների ինչպէս օգտին, նոյնպէս և մնասին: Եթէ երկուսից չորս տարեկան երեխային հաստատ, բայց քնքուշ ձայնով ասել—«չէ՞ որ դու կուշտ ես», շաա յաճախ նա վայր կը դնի հացը, որ արդէն բերան տանելու վրա էր: Այս ամենը ցոյց է տալիս թէ ինչպէս ամեն մի անգուշութիւն երեխայի հետ ունիցած մեր յարաբերութեան մէջ, ամեն մի յիշատակութիւն վատի մասին կարող է ազգել նրա վարքի վրա:

VII

Կապրիզներն ոչնչացնելու միջոցները

Ուղղիչ միջոցներից մեծ հեղինակութիւն է վայելում լացին, բղաւոցներին և մանկական դիւրագրգռութեան այլ արտայայտութիւններին ուշադրութիւն չը դարձնելը։ Պէտք է աշխատել ցոյց տալ երեխային, որ լացով կամ բղաւոցով չի կարող ազդել մեղ վրա, և դա անհրաժեշտ է, որպէսզի նա չը փորձի այդպիսի միջոցներով մեղ հետ կուտ դուրս գալ։ Բայց երեխայի իհսուաղաղակի և լացի միջոցին անկարելի է հոանդուն միջոցների չը դիմել։ Պատմում են, որ կան այսպիսի մայրեր, որոնք երկու կամ երրեմն նաև աւելի ժամ շարունակ համբերութեամբ տանում են երեխաների սաստիկ բղաւոցը և կատաղի շարժումները, և հետեւանքը լինում է այն, որ այդպիսի դէպերից յետոյ բղաւաններն իրանք խաղաղ մօտենում են նրանց և, այս բանը մի երկու անգամ կրկնւելուց յետոյ, արդէն չեն ցանկանում անօգուտ իրանց տանջել բռլորի համար էլ անախորժ կապրիզներով։ Սակայն այդ միջոցը յաճախ անտեղի և վնասաբեր է լինում։ Դրա համար ծնողները պահանջում է ֆիզիքական մեծ ուժ, որովհետև այդ բղաւոցն ու լացը միշտ սաստիկ յոգնեցնում են նրանց. դարձեալ նրանց կողմից մեծ համբերութիւն է պահանջում, և վերջապէս հարևանների համաձայնութիւնը, օրինակ ամառանոցում։ Բացի դրանից, եթէ այդ կապրիզներն առաջ են գալի երե-

խայի նեարդայնութիւնից, ևման անուշակրութիւնը
ոչ թէ ոչչացնում է, այլ միայն ուժ է տալիս նրանց:
Կարծ ասենք, այդ միջոցը թոյլատրելի է խիստ սահ-
մանափակութիւնը և միայն այն ժամանակ, երբ կապ-
րիզները չեն հասել ափֆէկտների, որովհետև վերջին-
ներս, արիւնը գլուխ զարկելով կամ նեարդային սիս-
տեմը գրգռելով, միշտ վնասակար ազդեցութիւն են ու-
նենում երեխաների վրա, երբեմն առաջացնելով նոյն
իսկ ջաճգութիւններ:

Մի քանիսը մատնանշում են երեխաների
լինքնադիտողութեան վրա, որպէս կապրիզներն արմա-
տախիլ անելու միջոցներից մէկի վրա: Թէպէտ և կա-
րելի է արհեստականօրէն ուժեղացանել երեխայի ինք-
նադիտողութիւնը, օրինակ՝ յաճախ ձևացնելով նըան-
բայց այդ բանին չը պէտք է ձգտել: Երեխայի գլուխը մա-
նաւանդ արագ է զարդանում մինչև Շտարեկան հասակը:
հետեաբար, մինչև այդ ժամանակ նրա Փունկցիաները
դեռևս ըիչ են զարդացած լինում: Այս ինչ շրջապա-
տով կահնըը իր բազմաթիւ նորութիւններով երեխա-
յին առանց այդ էլ շատ մտաւոր աշխատանք է տա-
լիս. աւելի ևս ծանրաբեռնել երբ օրդանիզմը թոյլ է
փանզաւոր է:

Գուցէ այստեղ որոշ չափով նպաստի նաև երես
խայլի ինքնասիրութիւնը, Թէպէտ ծնողների բացա-
կանչութիւնները՝ «ախ, ամօթ չէ», մանաւանդ երեխայլ
գրգռուած բռպէին, աւելի շուտ գրգռում, քան թէ հան-
գստացնում են նրան, բայց երեխաների լաւ տրամա-
դրւած ժամանակ նրանց վատ սովորութիւնների վրա

բարեսըտօրէն ծիծաղելը կարող է որոշ չափով թու-
լացնել վերջիններս։ Երբ երեխաս չորս տարեկան էր
դառնում, սկսել էր գրգռւած ժամանակ բղաւել «էլէ»
և «պէպէ» անմիտ բառելը, թերես դիտմամբ աղաւա-
ղելու «նանի» և «պապ» բառելը։ Ես, կինս և զա-
յեակը յաճախ ծիծաղում էինք այդ բանի վրա, մանա-
ւանդ, երբ երեխան ուրախ էր լինում, նա ինքն էլյա-
ճախ ծիծաղում էր, և այդ հանգամանքը զգալի կերպով
այնքան աղղեցութիւն ունեցաւ, որ նա դադարեց այդ-
պէս անմիտ բղաւելուց։

Հարկաւոր է լինում նաև պատիժներին դիմել
ի հարկէ գերազանցով բնական պատիժները, այսինքն
այնպիսիները, որոնք սերտ կապւած են գործած յան-
ցանքի հետ: Այդ պատիժները որոշ չափով գործադրե-
լի են նաև առաջին մասկութեան հասակում: Իմ երկու
և կէս տարու աղջիկս մինչ այն աստիճան սովորել էր
որ կապրիզներ անելիս իրեն առանձնասենեակ էին ու-
ղարկում սեղանատանից, ուր նստած էին լինում չա-
փահպաները և ուր նա սովորաբար խաղում էր, որ երբ
սկսում էր հեկեկալ կամ լաց լինել, շատ անգամ ինքն
էր գնում այնտեղ, և շրջապատի փոփոխութիւնը հան-
գուտացնում էր նրան: Ծնողներից մի քանիսը երեխա-
կատացնում էր նրան: Ծնողներից մի քանիսը երեխա-

քանչիւր դաստիարակ: Երեխաս միանգամայն ակներև քանչիւր դաստիարակ: Երեխաս միանգամայն ակներև կերպով էր ճնշում իր բղաւոցը լոկ այն նպատակով, որ կարողանար մնալ դայեակի կամ չափահամների. հետ լնդհանրապէս:

Տողերիս գրողը առիթ է ունեցել դիմելու աւելի ևս խիստ միջոցի: Դայեակի անտակտութեան պատճառով երեխաս սովորել էր երեմն կապրիզներ անել, այն ինչ պայմանները այնպէս էին, որ անկաց էր լը թողնել նրան նոյն դայեակի ձեռքին: Այն բելի էր չը թողնել նրան նոյն դայեակի ձեռքին: Այն ժամանակ ես, կապրիզները ոչնչացնելու նպատակով բարձրացնում էի ձայնս և այդպիսով հասնում այն բարձրացնում էր իրեն նոյնիսկ իմ բացակայութեան միջոցին: Բայց այդպիսի աղադակիցս յետոյ ես իսկոյն երեխայի հետ վարւում էի առաջւայ հասարակ և սիրալիք կերպով: Ես թոյլ էի տալիս ինձ նման վարմունքը, համոզւած լինելով, որ երեխան դիտի, թէ ես իսկապէս սիրում և միշտ փայփայում եմ իրան, և եթէ ես բարկացայ, նշանակում է նա իսկապէս վատ է վարւել: Նեարդայնութիւնից ես չէի վախենում, որովհետեւ այդպիսի դէպքեր կրկնում էին շատ սակաւ և իսկոյն փոխում էին լաւ յարաբերութեան: Սակայն իմ այդ գործ դըած միջոցը շատ մասնկավարժների իողմից խրախուսանքի չի արժանանում, ուստի և իկողմից չունեմ այստեղ առաջարկելու:

Կապրիզներն ոչնչացնելու և կանխելու պատիժներից մէկն է նաև մօր կամ դաստիարակչունո՞ւ երեսայից հեռանալը: Մայրը չի խօսում, չի փայփայում խայից հեռանալը: Մայրը չի խօսում, չի փայփայում խայից միջոցներ, բայց կրթական գործում մանր բան գոյութիւն չունի:

Ներողութիւն չը խնդրի և այլն: Թէպէտ և այս միջոցը երբեմն գուցէ հասնում է իր նպատակին, բայց եթէ դրա իրագործումը պիտի տեսի թէկուզ մի քսան ըոպէ, դա արդէն ցանկալի չի: Երեխան անկարող է դեռ հասկանալ այն միտքը, որի հիման վրա ծնողները զինւում են կապրիզների դէմ, որովհետեւնա աւելիքիչ խելքով է ապրում, քան զգացմունքով: Եթէ երեխան իր կապրիզների դէմ չի նկատում ծնողների կողմից սաստիկ զրգուում կամ սաստիկ զայրոյթ, իր կապրիզների դէմ ուղղած դանդաղ դիմագրութիւնը. Երեւում է իրան մի որոշ տեսակի կապրիզ ծնողների կողմից, որոնց հետ կարելի է կուել էլ: Իսկ իւրաքանչիւր կուի թէ գրգռում է երեխային և թէ այս դէպքում յամառութիւն է զարգացնում: Այդպիսով ուրեմն երեխային իրենից հեռացնելը, կամ ուրիշ խօսքով այն, ինչ որ մենք երեխաների—և ոչ թէ մեր—մէջ «իգրել» ենք անւանում, հասցնում է ոչ ցանկալի հետևանքների:

Մնում է միայն խօսել այն միջոցների մասին, որոնց օգնութեանն ենք դիմում ոչ թէ երեխային ուղղելու, այլ արդէն առաջացած կապրիզները ճնշելու համար: Այստեղ հարկաւոր է չը մոռանալ, որ լացից կամ բղաւոցից ամեն մի խօսափումը արդէն ինքն իւրեն նպաստում է կապրիզութեան դէմ կուելուն, որովհետեւ թոյլ չի տալիս, որ առանց լուրջ պատճառի գրգռուելու սովորութիւնը զարգանայ: Բղաւոցն և լացը խանգարելու համար յաճախ կան ամենամանը, ըստ երկոյթին աննշան միջոցներ, բայց կրթական գործում մանր բան գոյութիւն չունի:

Երբ երեխաս գրգռւած է լինում և կապրիդ ներ է անում, նա միենայն առարկայի վերաբերմամբ երբեմն ասում է՝ «ուզում եմ», երբեմն՝ «չեմ ուզում»։ Նրան հազցնում են, նա չէ, չէ և բղաւում, դադարում նրան հազցնուց—նա լաց է լինում թէ ինչու դադարեն հազցնելուց— նա լաց է լինում թէ ինչու դադարեցին։ Դայեակը աշխատում է իմանալ՝ վերջապէս թնչ է ուզում երեխան, և դրանով մի աւելորդ անգամ գըրգուում է նրան։ Կապրիդը անբաւականութեան ընդհանուր գացումի արտայալութիւն է և ոչ թէ ցանկութեան, ուստի և երեխան ինքն էլ չը գիտի թէ ինչ կութեան, ուստի և երեխան ինքն էլ չը գիտի թէ ինչ է ուզում, և իզուր է նրան այդ մասին հարցնելլ։ Իզուր է նրան համոզել որեէ բանում։ Պէտք է ուզդարի կի և շուտով երեխայի փոխարէն վճռել և կատարել կի և ամբով երեխան սաստիկ լալիս է, բղացյալ վճռուուր եթէ երեխան սաստիկ լալիս է, պէտք է ամբով է ամբով շամփուլ աշխատել նըւում է, պէտք է ամբով շամփուլ աշխատել նըւում է, սակայն շարունակելով ձեր վճռի ըան ուրախացնել, սակայն շարունակելով ձեր վճռի իրագործումը և էլի մի անգամ բարձր կրկնելով, իրագործումը և էլի մի անգամ բարձր ակտար է աշխատել, որ երեխան սոյնիսկ ազօտ կերպէտք է աշխատել, որ երեխան սոյնիսկ ազօտ կերպապով չը կարծի, թէ ուրախացնելով դուք իր բարեացակամութիւնն էք որոնում, եթէ գործը չափազանցութեան, աֆֆէկտի չի հասել, երեխային ուրախացնելը շատ հեշտ է, որովհետև նա վերին աստիճանի տպաւորւող է, իսկ աֆֆէկտի գէպօւմ այդ շատ դժւար է։ Երբ երեխաս երբեմն սաստիկ կապրիզներ էր անում, իսկ ինչպէս ասացի վերև, նրան առանձնասենհակա էս տանում, որպէսողի հեռացնեմ դիւրագրգուութեան առիթ տւող առարկաներից։ Իսկ եթէ երեխան այնտեղ էլ սաստիկ բղաւում է, այն ժամանակ ցոյց տալով իր թէ

IX Մանուկյանի աշխատանքն ընտանիքում—Ակսել Արտապալի, թարգմ. Մ. Ասիլեանցի, 15 կ.

X Տղան և աղջիկը անցողական շրջանում—Բուլի և Նելսէնի, թարգմ. Ստ. Լիսիցեանի, 10 կ.

XI Մանկական ազատութիւնն ու ուրախութիւնը—Օտտօ Էրնստի, թարգմ. Լ. Բարայեանի: 20 կ.

XII Փողովրդական մանկական խաղեր, խմբագրեց Ստ. Լիսիցեան, 20 կ.

XIII Ըստանեկան յարաբերութիւններն ու նըրանց կրթիչ նշանակութիւնը—Ս. Ն. Օստրոգորսկու, թարգմ. Լ. Շ., 20 կ.

XIV—XV Մանկան հոգին—պրօֆ. Սիկորսկու, թարգմ. Միս. Աս. և Ստ. Լ., 45 կ.

XVI Ժառանգականութիւնը և դաստիարակութիւնը—Ռուսականի, թարգմ. Լ. Բարայեանի, 15 կ.

XVII Դաստիարակութեան իդէալները, Ռուսութիւնի, —Մանկան հոգեկան կեանքի զարգացումը, թարգմ. Լ. Բարայեանի, 20 կ.

XVIII Ըստանեկան թատրոն—Վ. Բ., թարգմ. Միս. Ասիլեանի, 20 կ.

XIX Մանուկը ընութեան մէջ. Ա. Արստավիլի, թարգմ. Մ. Ասիլեանի, 15 կ.

XX Մանկան ճիծաղը—Վ. Ռուդակովի և թարգմանիչ՝ Բարոյագիտութեան դասաւանդումը.—պրօֆ.

Լ. Սովոժի—15 կ.

ԱՄԲՈՂՋ ՇԱՐԻ ԳԻՆՆ Է Յ ԱՌԻԲԼԻ 30 ԿՐՊ.

Ճանապարհածախով՝ 1 ռուբլոց ոչ պակաս գընողների համար խմբագիտութեան վրա է:
Հասցէն՝ Տիֆլիս, Ռедакցիա „Ասկէ”



NL0145609

ԶՐԻ ՑԱԽԵԼԻԱԾ «ՀԱՍԿԵՐԻ»

